

Հաստատված է նոր խմբագրությամբ  
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ  
դիտորդ խորհրդի որոշմամբ

Գրանցված է  
նոր խմբագրությամբ

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկում

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

Նախագահ՝ Արթուր Զավադյան

«17» հունվարի, 2019թ.  
ք. Երևան  
ՀՖԲ-01/073Լ

« » 2019թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿՄԱՆ ԵՎ  
ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՄԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

# ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԳԼՈՒԽ 1. Կանոնների կարգավորման առարկան

1. Սույն կանոններով սահմանվում են «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության կողմից կազմակերպվող շուկաներում արժեթղթերի ցուցակման կամ առանց ցուցակման առևտրին թույլտվության, դրանց կասեցման և դադարեցման հիմքերը, պայմանները և գործընթացները, ինչպես նաև ցուցակված կամ առևտրին թույլտվություն ստացած կամ այդ նպատակով «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությանը ներկայացված արժեթղթերին և դրանց թողարկողներին (այսուհետև՝ Թողարկող) ներկայացվող պահանջները, վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները:
2. «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է սույն կանոններում նշված արժեթղթերի կարգավորվող շուկաների օպերատորը (այսուհետև՝ Օպերատոր):

## ԳԼՈՒԽ 2. Կանոններում օգտագործվող հասկացությունները

3. Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.
  - 1) **«Օրենք»**. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
  - 2) **«Ազատ շրջանառության ենթակա արժեթուղթ»**. արժեթուղթ, որի միավորի գրավադրումը կամ սեփականատիրոջ փոփոխությունը տվյալ արժեթղթի թողարկման մասին որոշմամբ կամ թողարկողի կանոնադրությամբ չի վերահսկվում տվյալ արժեթղթի թողարկողի և/կամ նրա կողմից թողարկված արժեթղթերի այլ սեփականատերերի կողմից:
  - 3) **«Հանրությանը պատկանող բաժնետոմսեր»**. որևէ թողարկողի կողմից թողարկված և Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող նույն դասի բաժնետոմսերի մաս, որում ներառված չեն ինքնուրույն կամ իրենց հետ փոխկապակցված անձանց հետ միասին տվյալ բաժնետոմսերի ընդհանուր քանակի 5 (հինգ) և ավելի տոկոսի սեփականատերերին, թողարկողի կառավարման մարմինների անդամներին և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց, թողարկողի դուստր ընկերություններին, դրանց կառավարման մարմինների անդամներին և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց, որևէ պետությանը պատկանող, ինչպես նաև թողարկողի տրամադրության տակ գտնվող բաժնետոմսերը:  
Հանրությանը պատկանող բաժնետոմսերի չափաբաժինները հաշվարկվում են հիմք ընդունելով յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ հանրությանը պատկանող բաժնետոմսերի մասին տվյալները, իսկ սույն կանոններով սահմանված սահմանային չափաբաժիններին համապատասխանությունը գնահատվում է նախորդ երեք ամիսների չափաբաժինների միջին արժեքով:
  - 4) **«Կորպորատիվ պարտատոմս»**. իրավաբանական անձի կողմից թողարկված պարտատոմս:
  - 5) **«Ներդրումային ֆոնդի փայ»**. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային փակ ֆոնդի փայ կամ բաժնետոմս:

- 6) **«Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմին»**. Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար:
- 7) **«Բորսա»**. Ֆոնդային բորսայի հարթակը, որում սույն կանոններով սահմանված կարգով ցուցակված արժեթղթերը և դրանց թողարկողները բավարարում են Օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն կանոններով սահմանված պահանջներին և չափանիշներին:
- 8) **«Ազատ շուկա»**. ազատ շուկայի հարթակը, որում՝ սույն կանոնով սահմանված կարգով առևտրին թույլատրված արժեթղթերը բավարարում են սույն կանոններով սահմանված պահանջներին և չափանիշներին, և որոնք Բորսայում ցուցակված չեն:
- 9) **«Պետական պարտատոմսերի շուկա»**. Օպերատորի կողմից կազմակերպված պետական պարտատոմսերի կարգավորվող շուկա, որում՝ սույն կանոնով սահմանված կարգով, առևտրին թույլատրված պետական պարտատոմսերը բավարարում են սույն կանոններով սահմանված պահանջներին և չափանիշներին:
- 10) **«Ցուցակ»**. Բորսայում արժեթղթերի դասակարգման համակարգ, որը ձևավորվում և վերահսկվում է Օպերատորի կողմից, և որում ընդգրկված արժեթղթերի և դրանց թողարկողների նկատմամբ սահմանված են միանման պահանջներ:
- 11) **«Առևտրին թույլտվություն»**. որոշակի նույն դասի արժեթղթերով Օպերատորի կողմից կազմակերպված որոշակի շուկայում գործարքներ կնքելու հնարավորության ընձեռում:
- 12) **«Արժեթղթերի ցուցակում»**. Օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված որոշակի պահանջներին և չափանիշներին բավարարող արժեթղթերի՝ Բորսայում առևտրին թույլտվության գործընթաց, որի արդյունքում արժեթղթերը սույն կանոններով սահմանված կարգով ընդգրկվում են Բորսայի համապատասխան ցուցակում:
- 13) **«Ցուցակման կասեցում» կամ «առևտրին թույլտվության կասեցում»**. սույն կանոններով սահմանված դեպքերում և կարգով Օպերատորի կողմից կազմակերպված որոշակի շուկայում տվյալ դասի արժեթղթերով գործարքներ կնքելու հնարավորության ժամանակավորապես արգելափակում:
- 14) **«Առևտրին թույլտվության դադարեցում»**. սույն կանոններով սահմանված դեպքերում և կարգով առևտրին թույլատրված նույն դասի արժեթղթերով գործարքներ կնքելու հնարավորության դադարեցում:
- 15) **«Արժեթղթի ապացուցակում»**. սույն կանոններով սահմանված կարգով նույն դասի արժեթղթերի Բորսայում առևտրին թույլտվության դադարեցում և Բորսայի ցուցակներից դրանց հեռացում:
- 16) **«Ցուցակման պահպանում» կամ «առևտրին թույլտվության պահպանում»**. սույն կանոններով սահմանված գործընթաց, որի համար սահմանված պահանջների կատարումը անհրաժեշտ է Օպերատորի կողմից կազմակերպված համապատասխան շուկայում տվյալ դասի արժեթղթերով գործարքներ կնքելու հնարավորությունը պահպանելու համար:
- 17) **«Տեղեկատվական համակարգ»**. Օպերատորի առևտրային համակարգ պաշտոնական ինտերնետային կայք կամ տեղեկատվության հրապարակման Օպերատորի կողմից օգտագործվող այլ համակարգ:

- 18) **«Ֆինանսական հաշվետվություններ».** ՀՀ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին չհակասող և ներդրողների օգտագործման համար նախատեսված ֆինանսական հաշվետվություններ:
  - 19) **«Սեփական կապիտալ».** բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների համար՝ ընդհանուր կապիտալը, իսկ այլ կազմակերպությունների համար՝ ակտիվների և պարտավորությունների տարբերությունը՝ հաշվարկված Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման կամ դրանց համարժեք կանոններին համապատասխան:
  - 20) **«Բաժնետոմսերի հաշվարկային ընդհանուր արժեք».** թողարկողի տեղաբաշխված տվյալ դասի բաժնետոմսերի քանակի և, դեռ առևտրին թույլատվություն չստացած բաժնետոմսերի դեպքում, այդ բաժնետոմսերի առևտրին թույլատրման մասին որոշումը կայացնելուն նախորդող 10 (տաս) օրվա ընթացքում բաժնետոմսերի միջին կշռված գնի արտադրյալը, իսկ առևտրին թույլատվություն ստացած (ցուցակված) բաժնետոմսերի դեպքում, ավարտված վերջին եռամսյակի առևտրային բոլոր օրերի համար այդ բաժնետոմսերի փակման գների միջին թվաբանականի՝ կշռված բաժնետոմսերի քանակով, արտադրյալը: Եթե նշված ձևով անհնար է հաշվարկել բաժնետոմսերի ընդհանուր արժեքը, ապա որպես բաժնետոմսերի հաշվարկային ընդհանուր արժեք ընդունվում է տվյալ դասի բաժնետոմսերի քանակի և դրանց հաշվեկշռային արժեքի արտադրյալը:
  - 21) **«Կենտրոնական դեպոզիտարիա».** «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն:
  - 22) **«Միջազգային կազմակերպություն».** Օրենքի 4-րդ հոդվածի 3)-րդ կետով սահմանված ցանկում ընդգրկված միջազգային կազմակերպություն:
4. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և Օպերատորի այլ կանոններով սահմանված նշանակությունները:

### **ԳԼՈՒԽ 3. Օպերատորի կողմից կազմակերպվող կարգավորվող շուկաներում գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերը և դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները**

5. Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում գործարքի առարկա կարող են հանդիսանալ միայն սույն կանոններով ներկայացված այն արժեթղթերը, որոնք և որոնց թողարկողները բավարարում են սույն կանոններով նախատեսված ընդհանուր և հատուկ պահանջներին, և որոնք թույլատրված են առևտրին:
6. Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում գործարքի առարկա կարող են հանդիսանալ հետևյալ արժեթղթերը՝
  - 1) բաժնետոմսերը.
  - 2) պարտատոմսերը.
  - 3) դեպոզիտար ստացականները.
  - 4) ներդրումային ֆոնդի փայերը:
7. Պետական պարտատոմսերի շուկայում առևտրի առարկա կարող են հանդիսանալ բացառապես Հայաստանի Հանրապետության և Կենտրոնական բանկի կողմից թողարկված պետական պարտատոմսերը:

8. Դեպոզիտար ստացականները, ներդրումային ֆոնդի փայերը և դրամական շուկայի գործիք հանդիսացող կորպորատիվ պարտատոմսերը առևտրի առարկա կարող են հանդիսանալ բացառապես Ազատ շուկայում:
9. Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերը, ի լրումն սույն կանոններով սահմանված այլ չափանիշների և պայմանների, պետք է բավարարեն հետևյալ նվազագույն չափանիշներին և պայմաններին՝
- 1) պետք է լինեն ոչ թղթային, ազատ շրջանառության ենթակա արժեթղթեր, որոնք Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում կարող են ներկայացվել և ներկայացվում են համարժեք ամբողջական միավորների տեսքով.
  - 2) դրանց նկատմամբ իրավունքների հաշվառումը պետք է իրականացվի Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Կենտրոնական բանկի կողմից: Այլ անձանց կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում ներկայացված արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների կենտրոնացված հաշվառումը իրականացնում են Կենտրոնական դեպոզիտարիան կամ Կենտրոնական բանկը.
  - 3) դրանց թողարկողը բավարարում է սույն կանոններով սահմանված պահանջներին.
  - 4) դրանց վերաբերյալ Օրենքի պահանջներին համապատասխան հրապարակվել է առևտրի ազդագիր, բացառությամբ՝
    - ա. երբ սահմանված առևտրի ազդագրի փոխարեն հրապարակվել է տվյալ արժեթղթերի հրապարակային առաջարկի համար կազմված ազդագիրը, և թողարկողը կամ տեղաբաշխողը դիմում է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար տվյալ արժեթղթերի տեղաբաշխման ավարտից անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կամ
    - բ. եթե տվյալ արժեթղթերի համար պահպանված են առևտրի ազդագրի հրապարակման պահանջից Օրենքով սահմանված բացառությունների կիրառման համար Օրենքով նախատեսված հիմքերը և/կամ պայմանները:
  - 5) Օպերատորին հայտագրվել են Հայաստանի Հանրապետությունում շրջանառության ենթակա տվյալ դասի տեղաբաշխված բոլոր արժեթղթերը, բացառությամբ՝
    - ա. երբ թողարկողի նկատմամբ հսկողությունը պահպանելու նպատակով կամ արժեթղթերի շրջանառությունը որոշակի ժամկետով սահմանափակող պայմանագրերի պատճառով կարգավորվող շուկայում առևտրի համար ներկայացվում է տվյալ դասի արժեթղթերի մի մասը.
    - բ. երբ տվյալ դասի տեղաբաշխված արժեթղթերի մի մասը շրջանառվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող և ազդագրի հրապարակման պահանջից արտոնության նպատակով Կենտրոնական բանկի կողմից սահմանված ցանկում ընդգրկված որևէ կարգավորված շուկայում և սահմանափակված է այդ արժեթղթերի նշված մասի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում.
    - գ. երբ իրականացվել է Օպերատորի կողմից կազմակերպված որևէ շուկայում արդեն շրջանառվող տվյալ դասի արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխում և թողարկողը հնարավորինս սեղմ և ողջամիտ ժամկետներում ամրագրում է այդ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման արդյունքները և ձեռնարկում է անհրաժեշտ և բավարար գործողություններ լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերով Օպերատորի կողմից

կազմակերպված համապատասխան շուկայում առևտուր իրականացնելու հնարավորությունն ապահովելու համար:

10. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը սույն կանոնների 9.-րդ կետի 5)-րդ ենթակետում նշված բացառությունները կիրառում է այն դեպքերում, երբ առնվազն թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվել է բավարար տեղեկատվություն այդ ենթակետում նշված դեպքերի մասին և տվյալ դասի բաժնային արժեթղթերի մի մասի ներկայությունը Օպերատորի կողմից կազմակերպված շուկայում չի վտանգում ներդրողների շահերը: Օպերատորի դիտորդ խորհուրդը կարող է որոշակի պահանջներ սահմանել սույն կետում նշված տեղեկատվության բովանդակության և հրապարակման ձևի նկատմամբ, իսկ Օպերատորը՝ հրապարակել այդ տեղեկատվությունը:
11. Ազատ շուկայում առևտրին թույլտվության ներկայացված և/կամ այդպիսի թույլտվություն ստացած նույն դասի պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը պետք է լինի առնվազն 100,000,000.0 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի դեպքում, 250,000.0 (երկու հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի դեպքում, 200,000.0 (երկու հարյուր հազար) եվրո՝ եվրոյով արտահայտված պարտատոմսերի դեպքում կամ 100,000,000.0 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամին համարժեք գումար՝ այլ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում՝ հաշվարկված առևտրին թույլտվության ներկայացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
12. Դեպոզիտար ստացականները պետք է բավարարեն նաև հետևյալ պահանջներին՝
  - 1) թողարկված լինեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից.
  - 2) թողարկված լինեն բաժնային արժեթղթերի կամ պարտատոմսերի հիման վրա.
  - 3) մեկ դեպոզիտար ստացականի հիմքում ընկած է արժեթղթի մեկ ամբողջական միավոր:
13. Պարտատոմսերի տեղաբաշխման առաջին օրվանից մինչև դրանց նկատմամբ իրավունքներն ամրագրող անձի մոտ մարման մասին փաստացի ամրագրման օրը ներառյալ հաշվարկված ժամկետը պետք է չգերազանցի այդ պարտատոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետայնությունը, և այդ որոշումը չպետք է ներառի ժամկետների հաշվարկման այնպիսի ընթացակարգեր կամ ձևակերպումներ, որոնք կարող են ապակողմնորոշել կամ հնարավորություն չընձեռել պարտատոմսերի մարման և դրանցով ամրագրված պարտավորությունների կատարման ժամկետների հստակ հաշվարկման համար:
14. Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում ներկայացված արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) և դրանցով վերապահված իրավունքների իրականացման կարգը և պայմանները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

#### **ԳԼՈՒԽ 4. Արժեթղթերի դասկարգումը Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում**

15. Ելնելով սույն կանոնով սահմանված պայմաններից, Բորսայում ցուցակված բաժնետոմսերը կամ պարտատոմսերը համապատասխանաբար ընդգրկվում են Բորսայի հետևյալ ցուցակներից որևէ մեկում՝
  - 1) բաժնետոմսերի հիմնական ցուցակ, նաև՝ (A).
  - 2) բաժնետոմսերի երկրորդային ցուցակ, նաև՝ (B).
  - 3) պարտատոմսերի հիմնական ցուցակ, նաև՝ (Abond).

- 4) պարտատոմսերի երկրորդային ցուցակ, նաև՝ (Bbond):
16. Ազատ շուկայում առևտին թույլտվություն ստացած բաժնետոմսերը, դեպոզիտար ստացականները և ներդրումային ֆոնդի փայերը ներառվում են բաժնետոմսերի ազատ շուկայում, նաև՝ (C), իսկ պարտատոմսերը՝ պարտատոմսերի ազատ շուկայում, նաև՝ (Cbond):
  17. Առևտին թույլտվություն ստացած պետական պարտատոմսերն ընդգրկվում են պետական պարտատոմսերի շուկայում, նաև՝ (Gbond):
  18. Դրամական շուկայի գործիք հանդիսացող կորպորատիվ պարտատոմսերն առևտին թույլտվություն ստանալուց հետո ընդգրկվում են (Cbond) պարտատոմսերի ազատ շուկայում:
  19. Միևնույն դասի արժեթղթերը չեն կարող միաժամանակ շրջանառվել և՛ Ազատ շուկայում, և՛ Բորսայում, իսկ Բորսայում միաժամանակ ընդգրկվել տարբեր ցուցակներում:
  20. Բացի Բորսայում ցուցակված արժեթղթերից, Օպերատորի կողմից կազմակերպված այլ շուկաներում առևտրին թույլտվություն ստացած արժեթղթերը ցուցակված արժեթղթեր չեն, և դրանց վերաբերող տեղեկության ամրագրման կամ հաղորդման ժամանակ դրանց որևէ կերպ չպետք է վերագրվեն «ցուցակված» բառը կամ այդ իմաստը արտահայտող այլ արտահայտություններ, որոնք կարող են ապակողմնորոշել նշված տեղեկությունն օգտագործողներին:

**ԳԼՈՒԽ 5. Բորսայի մեկ ցուցակից այլ ցուցակ կամ Ազատ շուկա, կամ Ազատ շուկայից Բորսա արժեթղթի տեղափոխումը**

21. Թողարկողի կամ Օպերատորի նախաձեռնությամբ արժեթղթերը կարող են սույն գլխով սահմանված կարգով տեղափոխվել Բորսայի մեկ ցուցակից այլ ցուցակ կամ Ազատ շուկա, կամ Ազատ շուկայից Բորսա, եթե այդպիսի տեղափոխումը սահմանափակված չէ սույն կանոններով և եթե տվյալ արժեթղթերը և դրանց թողարկողը բավարարում են սահմանված պահանջներին:
22. Թողարկողի նախաձեռնությամբ Բորսայի մեկ ցուցակումից այլ ցուցակ արժեթղթերի տեղափոխումը կատարվում է տվյալ արժեթղթի թողարկողի դիմումի հիման վրա: Թողարկողի նախաձեռնությամբ Բորսայի մեկ ցուցակումից այլ ցուցակ արժեթղթերի տեղափոխման համար թողարկողը պետք է վճարի Օպերատորի «Սակագների մասին» կանոններով սահմանված վճարները:
23. Ազատ շուկայից Բորսա արժեթղթերի տեղափոխումը կամ հակառակը կատարվում է միայն սույն կանոններով սահմանված, համապատասխանաբար, ցուցակման կամ ապացուցակման գործընթացի արդյունքում:
24. Արժեթղթերը տեղափոխելիս դադարեցվում է նախկինում այդ արժեթղթերին տրված առևտրի թույլտվությունը:
25. Եթե Բորսայում ցուցակման պահպանման ընթացքում Բորսայի որևէ ցուցակում ընդգրկված արժեթուղթը (դրա թողարկողը) չի բավարարում Բորսայի տվյալ ցուցակի համար սույն կանոններով սահմանված որևէ պահանջին, սակայն Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կարծիքով տվյալ արժեթուղթը Բորսայի տվյալ ցուցակում առևտրին թույլտվության ժամանակավորապես պահպանումն անհրաժեշտ է ներդրողների շահերի պաշտպանման տեսանկյունից կամ որոշակի խելամիտ ժամկետում տվյալ արժեթուղթը (դրա թողարկողը) կրկին կբավարարի Բորսայի տվյալ ցուցակում ընդգրկման համար նախատեսված պահանջներին, ապա Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը՝ Օպերատորի իրավասու ստորաբաժանման համապատասխան եզրակացությունը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է կայացնում տվյալ արժեթղթերի՝ Բորսայի տվյալ ցուցակում

առևտրին թույլտվության ժամանակավորապես պահպանման և սույն կանոններով սահմանված «դիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհման մասին՝ սահմանելով որոշակի ժամկետ:

«Դիտարկման ենթակա» կարգավիճակի համար սահմանված ժամկետի ընթացքում՝ հաշվի առնելով ի հայտ եկած նոր հանգամանքները, կամ այդ ժամկետի ավարտից հետո Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը պետք է որոշում կայացնի տվյալ արժեթղթերի «դիտարկման ենթակա» կարգավիճակի դադարման կամ երկրորդային ցուցակում ընդգրկելու (եթե տվյալ արժեթղթերն ընդգրկված են եղել հիմնական ցուցակում), ապացուցակման և Ազատ շուկայում ընդգրկելու կամ ապացուցակման վերաբերյալ:

26. Եթե Բորսայում ցուցակման պահպանման ընթացքում Բորսայի որևէ ցուցակում ընդգրկված արժեթուղթը (դրա թողարկողը) չի բավարարում Բորսայի տվյալ ցուցակի համար կանոններով սահմանված որևէ պահանջին, և Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կարծիքով տվյալ արժեթուղթը Բորսայի տվյալ ցուցակում առևտրին թույլտվության ժամանակավորապես պահպանման համար բավարար հիմքեր չկան, ապա Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը՝ Օպերատորի իրավասու ստորաբաժանման համապատասխան եզրակացությունը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է կայացնում տվյալ արժեթղթերն երկրորդային ցուցակում ընդգրկելու (եթե տվյալ արժեթուղթն ընդգրկված է եղել հիմնական ցուցակում), կամ դրանց ապացուցակման և Ազատ շուկայում ընդգրկելու կամ ապացուցակման վերաբերյալ:
27. Սույն կանոնների 25.-րդ և 26.-րդ կետերում նշված դեպքերում Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից ընդունված որոշումները մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են Տեղեկատվական համակարգով և երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղղարկվում թողարկողին:
28. Թողարկողն իրավունք ունի մեկամսյա ժամկետում Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի՝ սույն գլխի համաձայն ընդունված, որոշումները բողոքարկել Օպերատորի դիտորդ խորհրդին:

## **ԳԼՈՒԽ 6. Արժեթղթերին հապավման շնորհումը Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում**

29. Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում արժեթղթերով գործառնությունները կանոնակարգելու նպատակով, Օպերատորի կողմից կազմակերպվող որևէ շուկայում առևտրին թույլտվության (ցուցակման) մասին որոշմամբ Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը տվյալ դասի արժեթղթերին շնորհում է հապավում:
30. Արժեթղթերի հապավման որոշման համար Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կարող է հիմք ընդունել Օպերատորի առևտրային համակարգում առկա տեղեկատվությունը, գործարար շրջաններում տվյալ արժեթղթի ճանաչելիությունն ապահովող նշագրումները, իրավասու մարմնի կողմից շնորհված արժեթղթերի ծածկագիրը կամ տվյալ արժեթղթերի միանշանակ նույնականացումն ապահովող այլ համարժեք կողը:
31. Օպերատորի կողմից տվյալ դասի արժեթղթերին առաջին անգամ շնորհված հապավումը փոփոխման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ հապավման փոփոխումն անհրաժեշտ է Օպերատորի առևտրային համակարգի արդյունավետ գործունեության կամ ներդրողների շահերի տեսանկյունից:



## ԲԱԺԻՆ II. ԲՈՐՍԱ

### ԳԼՈՒԽ 7. Արժեթղթերի ցուցակման գործընթացը

32. Արժեթղթերի ցուցակման գործընթացի նպատակն է որոշել արժեթղթերի և դրանց թողարկողների համապատասխանությունը Օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Օպերատորի կանոններով սահմանված որոշակի պահանջներին և չափանիշներին:
33. Արժեթղթերի ցուցակման գործընթացը սկսվում է, երբ Օպերատորն ընդունում է դիմող թողարկողի (դրա լիազորված անձի) կողմից ներկայացված հայտը (այսուհետև՝ «Հայտ») և Հայտին կից փաստաթղթերը:
34. Մինչև Հայտը ներկայացնելը թողարկողը պետք է վճարի Օպերատորի «Սակագների մասին» կանոններով սահմանված վճարները: Նշված վճարների չվճարման դեպքում թողարկողի կողմից ներկայացված Հայտը համարվում է չընդունված: Եթե թողարկողն անհրաժեշտ վճարումները կատարում է Հայտի փաստացի ներկայացումից հետո, ապա Հայտը համարվում է Օպերատորին ներկայացված անհրաժեշտ վճարումների կատարումը հավաստիացնող փաստաթղթերի Օպերատորի կողմից ստանալու օրվանից ոչ շուտ, քան հինգերորդ աշխատանքային օրը:
35. Օպերատորն իրավունք ունի իր Տեղեկատվական համակարգի միջոցով հրապարակել արժեթղթերի ցուցակման գործընթացը սկսելու վերաբերյալ տեղեկատվությունը:
36. Արժեթղթերի ցուցակման գործընթացը դադարած է համարվում՝
  - 1) Բորսայում արժեթղթերի ցուցակման մասին որոշման (այսուհետև՝ ցուցակման որոշում) ուժի մեջ մտնելու պահից, կամ
  - 2) արժեթղթերի ցուցակման մերժման մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից, կամ
  - 3) մինչև ցուցակման մերժման մասին որոշման ընդունումը թողարկողի (դրա լիազորված անձի)՝ արժեթղթերի ցուցակման գործընթացի դադարեցման մասին, դիմումի ներկայացման օրվանից:
37. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը ցուցակման գործընթացը պատշաճ իրականացնելու նպատակով իր որոշմամբ ձևավորում է առնվազն երեք անդամներից բաղկացած աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի անդամները նշանակվում և ազատվում են Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից: Աշխատանքային խմբի գործունեությունը կարգավորվում է Օպերատորի ներքին իրավական ակտերով:
38. Օպերատորի դիտորդ խորհրդի անդամները, Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը և սույն կանոնների 37.-րդ կետի համաձայն ստեղծված աշխատանքային խմբի անդամները պետք է գաղտնի պահեն առևտրային կամ այլ գաղտնիք կազմող և/կամ ներքին ցանկացած տեղեկությունները, որոնց նրանք տեղեկացել են ցուցակման գործընթացի ընթացքում իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս:
39. Սույն կանոնների նպատակներից ելնելով, ներքին տեղեկություն է համարվում ցանկացած տեղեկություն (այդ թվում՝ քննարկումների ժամանակ հնչեցրած կարծիքները), որը հրապարակային չէ և օգտագործվում է սույն կանոնների 38.-րդ կետում նշված անձանց կողմից արժեթղթերի առևտրին թույլատվությանը վերաբերող հարցերում որոշում կայացնելու նպատակով:

**ԳԼՈՒԽ 8. Բորսայում արժեթղթերի ցուցակման համար դիմող կամ արժեթղթերը ցուցակած թողարկողներին ներկայացվող պահանջները**

40. Բորսայում ցուցակված արժեթղթերի կամ արժեթղթերի ցուցակման համար դիմող թողարկողի գործունեությունը չպետք է հակասի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:
41. Բորսայում արժեթղթերի ցուցակման համար դիմող կամ արժեթղթերը ցուցակած թողարկողի տնտեսական և իրավական կարգավիճակները չպետք է վտանգեն ներդրողների շահերը: Մասնավորապես, Օպերատորն իրավունք ունի մերժել թողարկողի արժեթղթերի ցուցակումը Բորսայում, կասեցնել այդ արժեթղթերի ցուցակումը կամ ապացուցակել դրանք, եթե տվյալ թողարկողը գտնվում է լուծարման կամ սնանկության գործընթացներում, եթե նա չունի բավարար շրջանառու միջոցներ իր պարտավորությունները կատարելու կամ նախատեսված ծրագրերն իրականացնելու համար կամ առկա են տվյալ արժեթղթերով վերապահված իրավունքների իրականացումը վտանգող այլ հանգամանքներ:
42. Բորսայում արժեթղթերի ցուցակման համար դրանց թողարկողը պետք է ունենա պաշտոնական ինտերնետային կայք, և դրանով՝ առնվազն հայերեն, պարտավոր է բացահայտել իրեն և իր կողմից թողարկված արժեթղթերին վերաբերող՝ առնվազն Օրենքով, Կենտրոնական բանկի որոշումներով և Օպերատորի կանոններով նախատեսված տեղեկությունները:  
Հայերեն լեզվով տեղեկությունների բացահայտման սույն կետով սահմանված պահանջը համարվում է կատարված, եթե այդ տեղեկությունները հայերեն լեզվով բացահայտվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թողարկողի ներկայացուցչի կամ թողարկողի անունից հանդես գալու իրավասություններ ունեցող ներդրումային ծառայություններ մատուցող անձի պաշտոնական ինտերնետային կայքում, և եթե այդ մասին հրապարակված է թողարկողի և, թողարկողի միջնորդությամբ, Օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում:
43. Բորսայում արժեթղթերի ցուցակման համար դիմող թողարկողի ղեկավար անձանց կազմը պետք է զգալի փոփոխությունների ենթարկված չլինի Հայտի ներկայացմանը նախորդող տասներկու ամսվա ընթացքում և զգալի փոփոխություն չկրի ցուցակման գործընթացի ընթացքում: Թողարկողի ղեկավարության կազմում փոփոխությունը համարվում է զգալի, եթե թողարկողի կոլեգիալ գործադիր մարմնի կամ խորհրդի անդամների կեսից ավելին փոփոխվել են վերջին տասներկու ամիսների ընթացքում: Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը ունի սույն պահանջներից բացառություններ անելու իրավունք՝ միայն Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու դեպքում:
44. Բորսայում արժեթղթերի ցուցակման համար դիմող կամ արժեթղթերը ցուցակած թողարկողը պետք է ունենա առնվազն երեք անդամից բաղկացած տնօրենների կամ դիտորդ խորհուրդ:
45. Թողարկողի կանոնադրությունը չպետք է պարունակի այնպիսի դրույթներ, որոնք կարող են խոչընդոտել թողարկողի՝ Օպերատորի կողմից կազմակերպած շուկաներում, շրջանավոր (շրջանառության ենթակա), արժեթղթերով վերապահվող իրավունքների իրացմանը: Թողարկողի կանոնադրությունը՝ ներառյալ բոլոր փոփոխությունները և լրացումները, պետք է հասանելի լինի հասարակությանը առնվազն թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում:
46. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը իրավունք ունի թողարկողին տրամադրել առվելագույնը եռամսյա ժամանակ իր կանոնադրությունը և ներքին կանոնները Օպերատորի

կանոններով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար, եթե նշված փաստաթղթերը չեն համապատասխանում Բորսայի կանոններով սահմանված պահանջներին:

47. Բորսայում արժեթղթերի ցուցակման համար դիմող կամ արժեթղթերը ցուցակած թողարկողը պետք է ընդունի և կիրառի առնվազն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանություն ստացած Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, եթե չի ընդունել և չի կիրառում կորպորատիվ կառավարման համարժեք կամ ավելի խիստ նորմեր:
48. Բորսայում արժեթղթերի ցուցակման համար դիմող կամ արժեթղթերը ցուցակած թողարկողը պետք է հաստատի և իր ինտերնետային կայքում տեղադրի իր կառավարման մարմինների գործունեությունը, ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման գործընթացը, ինչպես նաև իր ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից իր արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնները և կանոնակարգերը:  
Օպերատորի դիտորդ խորհուրդը կարող է սահմանել թողարկողների կանոնների բովանդակության նկատմամբ մանրամասն պահանջներ:
49. Թափանցիկությունն ապահովելու նպատակով, Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը իրավունք ունի պահանջելու թողարկողներից իրենց ինտերնետային կայքում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Օպերատորի կողմից սահմանված ձևով, հաճախականությամբ և կարգով հրապարակել հաշվետվություններ և այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային կամ այլ գաղտնիք կազմող կամ ծառայողական տեղեկությունների:

## **ԳԼՈՒԽ 9. Բաժնետոմսերի հիմնական ցուցակում (A) բաժնետոմսերի ընդգրկման համար առանձնահատուկ պահանջներն ու չափանիշները**

50. Բաժնետոմսերի հիմնական ցուցակում (A) ընդգրկվում են այն բաժնետոմսերը, որոնք կամ որոնց թողարկողները բավարարում է հետևյալ չափանիշներին՝
- 1) տվյալ դասի բաժնետոմսերի հաշվարկային ընդհանուր արժեքը համարժեք է առնվազն մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամին.
  - 2) թողարկողը գործունեություն է ծավալում ոչ պակաս քան 3 տարի.
  - 3) թողարկողի գործունեության վերջին 3 տարիները ավարտված են զուտ շահույթի դրական մեծությամբ.
  - 4) թողարկողի Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող տվյալ դասի բաժնետոմսերի գրանցված սեփականատերերի (բաժնետերերի) նվազագույն քանակը 100 (հարյուր) է: Եթե Բորսայում գործարքների արդյունքում տվյալ դասի բաժնետոմսերի գրանցված սեփականատերերի (բաժնետերերի) քանակը նվազում է 100-ից, ապա այդ բաժնետոմսերի թողարկողը պարտավոր է ողջամիտ ժամկետներում ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ տվյալ դասի բաժնետոմսերի գրանցված սեփականատերերի (բաժնետերերի) սույն կետում նշված քանակն ապահովելու համար.
  - 5) հանրությանը պատկանող բաժնետոմսերի չափաբաժինը կազմում է առնվազն 15%:
51. Բաժնետոմսերի հիմնական ցուցակում բաժնետոմսերն ընդգրկվելու համար թողարկողը պետք է Բորսայում ապահովի տվյալ բաժնետոմսերի առնվազն մեկ Շուկա ստեղծողի առկայությունը:

**ԳԼՈՒԽ 10. Բաժնետոմսերի երկրորդային ցուցակում (B) բաժնետոմսերի ընդգրկման համար առանձնահատուկ պահանջներն ու չափանիշները**

52. Բաժնետոմսերի երկրորդային ցուցակում (B) ընդգրկվում են այն բաժնետոմսերը, որոնք կամ որոնց թողարկողները բավարարում է հետևյալ չափանիշներին՝
- 1) տվյալ դասի բաժնետոմսերի հաշվարկային ընդհանուր արժեքը համարժեք է առնվազն հինգ հարյուր միլիոն Հայաստանի Հանրապետության դրամին.
  - 2) թողարկողը գործունեություն է ծավալում ոչ պակաս քան 3 տարի.
  - 3) հանրությանը պատկանող բաժնետոմսերի չափաբաժինը կազմում է առնվազն 10%:

**ԳԼՈՒԽ 11. Պարտատոմսերի հիմնական ցուցակում (Abond) պարտատոմսերի ընդգրկման համար առանձնահատուկ պահանջներն ու չափանիշները**

53. Պարտատոմսերի հիմնական ցուցակում (Abond) ընդգրկվում են այն պարտատոմսերը, որոնք կամ որոնց թողարկողները բավարարում են հետևյալ չափանիշներին՝
- 1) թողարկողը գործունեություն է ծավալում ոչ պակաս քան 3 տարի, որից վերջին երկու տարիների ընթացքում թողարկողն իրականացրել է իր կողմից հիմնական հոշակված գործունեությունը.
  - 2) թողարկողի տվյալ դասի պարտատոմսերի թողարկված ծավալի մեծությունը (տվյալ դասի պարտատոմսերի անվանական արժեքների գումարը) կազմում է առնվազն 500,000,000.0 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի դեպքում, 1,250,000.0 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի դեպքում, 1,000,000.0 (մեկ միլիոն) եվրո՝ եվրոյով արտահայտված պարտատոմսերի դեպքում կամ 500,000,000.0 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամին համարժեք գումար՝ այլ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում՝ հաշվարկված ցուցակման ներկայացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
54. Պարտատոմսերի հիմնական ցուցակում պարտատոմսերն ընդգրկելու համար թողարկողը պետք է Բորսայում ապահովի տվյալ պարտատոմսերի առնվազն մեկ Շուկա ստեղծողի առկայությունը:

**ԳԼՈՒԽ 12. Պարտատոմսերի երկրորդային ցուցակում (Bbond) պարտատոմսերի ընդգրկման համար առանձնահատուկ պահանջներն ու չափանիշները**

55. Պարտատոմսերի երկրորդային ցուցակում (Bbond) ընդգրկվում են այն պարտատոմսերը, որոնք կամ որոնց թողարկողները բավարարում է հետևյալ չափանիշներին՝
- 1) թողարկողը գործունեություն է ծավալում ոչ պակաս քան 2 տարի.
  - 2) թողարկողի տվյալ դասի պարտատոմսերի թողարկված ծավալի մեծությունը (տվյալ դասի պարտատոմսերի անվանական արժեքների գումարը) կազմում է առնվազն 250,000,000.0 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի դեպքում, 625,000.0 (վեց հարյուր քսանհինգ հազար) ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի դեպքում, 500,000.0 (հինգ հարյուր հազար) եվրո՝ եվրոյով արտահայտված պարտատոմսերի դեպքում կամ 250,000,000.0 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամին համարժեք գումար՝ այլ արտարժույթով արտահայտված

պարտատոմսերի դեպքում՝ հաշվարկված ցուցակման ներկայացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

### **ԳԼՈՒԽ 13. Արժեթղթերի ցուցակման համար ներկայացվող փաստաթղթերը**

56. Արժեթղթերի ցուցակման գործընթացն իրականացվում է թողարկողի (դրա լիազորված անձի) կողմից Հայտի և դրան կից փաստաթղթերի ներկայացման հիման վրա:
57. Մինևույն թողարկողի կողմից ցուցակման համար լրացուցիչ կամ այլ դասի և/կամ տեսակի արժեթղթեր ներկայացման դեպքում Հայտին կից ներկայացվում են պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ նախկինում պատշաճ ներկայացված կից փաստաթղթերի:
58. Հայտը և դրան կից փաստաթղթերը (Հայտի և դրան կից փաստաթղթերի լրացումները) թողարկողի կողմից Օպերատորին են ներկայացվում՝
  - 1) մեկ օրինակից՝ թղթային կրիչով, և
  - 2) էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի միջոցով դրանք ուղարկելով Արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով, կամ էլեկտրոնային կրիչով՝ առձեռն:
59. Եթե թողարկողը Հայտը և դրան կից փաստաթղթերը ներկայացնում է միայն թղթային կրիչով կամ էլեկտրոնային եղանակով, կամ դրանք ակնհայտ թերի են ներկայացված, ինչի մասին տեղեկացվում է թողարկողը, ապա Հայտը համարվում Օպերատորին ներկայացված այն ամբողջական ստանալու օրվան հաջորդող օրը:
60. Հայտը և դրան կից փաստաթղթերը (Հայտի և դրան կից փաստաթղթերի լրացումները) պետք է կազմված և հաստատված լինեն օրենքով և սույն կանոններով սահմանված պահանջներին համապատասխան:
61. Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
  - 1) թողարկողի տվյալ դասի արժեթղթերը ցուցակման ներկայացման և արժեթղթերի ցուցակման վերաբերյալ Օպերատորի հետ պայմանագրի կնքման մասին թողարկողի մասնակիցների ժողովի կամ ժողովի որոշմամբ, կանոնադրությամբ, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նման որոշում ընդունելու իրավասություն ունեցող անձի որոշումը հավաստող փաստաթուղթը, եթե այն արդեն ներկայացված չէ Օպերատորին.
  - 2) Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները բավարարող ազդագիրը (եթե դրա կիրառումը պարտադիր է) կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթուղթը, եթե այն արդեն ներկայացված չէ Օպերատորին.
  - 3) ազդագրի գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշման կամ համաձայնության պատճենը՝ եթե դրանց առկայությունը նախատեսված է Օրենքով.
  - 4) թողարկողի կանոնադրությունը, դրա փոփոխությունները և լրացումները, եթե ներկայացված չեն Օպերատորին.
  - 5) ցուցակման ներկայացված արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) մասին թողարկողի իրավասու մարմնի որոշման պատճենը, եթե ներառված չէ ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չէ Օպերատորին.
  - 6) Հայտի ներկայացմանը նախորդող ավարտված միջանկյալ հաշվետու ժամանակահատվածների համար կազմման ենթակա թողարկողի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառված չեն ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չեն Օպերատորին.

- 7) Հայտի ներկայացման տարվանը նախորդող տարվա համար թողարկողի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, եթե դրանք ներառված չեն ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չեն Օպերատորին, և եթե թողարկողը՝ Հայտի ներկայացման պահին, կարող է կամ պարտավոր է ապահովել դրանց առկայությունը.
- 8) տեղեկություններ թողարկողի տնօրենների (դիտորդ) խորհրդի, գործադիր կամ վերստուգող մարմնի անդամների, նրանց նշանակման հիմքերի և այդ անձանց կողմից թողարկողի կազմում համատեղությամբ կամ նախկինում զբաղեցրած պաշտոնների վերաբերյալ, եթե այդ տեղեկությունները ներառված չեն ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չեն Օպերատորին.
- 9) տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված և կենտրոնացված հաշվառումն իրականացնող անձանց վերաբերյալ, եթե այդ տեղեկությունները ներառված չեն ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չեն Օպերատորին.
- 10) իրավասու մարմնի կողմից արժեթղթերին շնորհված տարբերակիչ ծածկագրի կամ տվյալ արժեթղթերի միանշանակ նույնականացումն ապահովող այլ համարժեք կողի շնորհումը հավաստող փաստաթուղթ՝ տարբերակիչ ծածկագրի (կողի) նշումով, եթե այն արդեն ներկայացված չէ Օպերատորին.
- 11) տեղեկատվություն Շուկա ստեղծողի և վերջինիս հետ կնքված պայմանագրի հիմնական պայմանների վերաբերյալ, մասնավորապես՝ նշելով թողարկողի արժեթղթերի գնման և վաճառքի հայտերի նկատմամբ պահանջները (Շուկա ստեղծողի առկայության դեպքում).
- 12) արժեթղթերի տեղաբաշխողի և թողարկողի միջև տեղաբաշխմանը վերաբերող գործող բոլոր պայմանագրերը կամ այլ համաձայնությունների լիարժեք նկարագիրը (եթե թողարկողի արժեթղթերի տեղաբաշխումը իրականացվել է կամ իրականացվում է այլ անձի կողմից).
- 13) պարտատոմսերը ցուցակման ներկայացման դեպքում նաև՝ պարտատոմսերի մարման վճարումների և տոկոսային վճարումների կատարման ժամանակացույցը, ինչպես նաև երկրորդային շուկայում պարտատոմսերի եկամտաբերության հաշվարկման համար Օպերատորի կողմից ընդունելի բանաձևը.
- 14) արժեթղթերի ցուցակման համար բաժնետոմսերի ներկայացման դեպքում նաև՝ Հայտի ներկայացմանը նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ տվյալ բաժնետոմսերի սեփականատերերի ցուցակը՝ առնվազն դրա համար Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված տեղեկություններով, և տեղեկանք հանրությանը պատկանող բաժնեմասի չափի վերաբերյալ՝ դրա ձևավորման հիմնավորմամբ.
- 15) տեղեկատվություն թողարկողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հսկող անձանց (առկայության դեպքում) վերաբերյալ՝ նշելով հսկողների անվանումը (անունը ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությունը, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում թողարկողին, եթե այդ տեղեկատվությունը ներառված չէ ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չէ Օպերատորին.
- 16) տեղեկատվություն ազդագրի կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթի կազմմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում թողարկողի կողմից բնականոն գործունեության

շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանների վերաբերյալ, որոնց գինը գերազանցում է թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը, եթե այդ տեղեկատվությունը ներառված չէ ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չէ Օպերատորին:

17) այլ փաստաթղթեր՝ թողարկողի հայեցողությամբ:

62. Եթե թողարկողը Հայտի ներկայացման պահին չունի ցուցակված որևէ արժեթուղթ, ապա թողարկողը սույն կանոնների 61-րդ կետում սահմանված փաստաթղթերից բացի Հայտին կից նաև պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

1) թողարկողի տնտեսական գործունեության և կանխատեսված տնտեսական արդյունքների նկարագրությունը ընթացիկ և հաջորդող ֆինանսական տարվա համար:

2) Օպերատորի կողմից սահմանված ձևին համապատասխան թողարկողի գրավոր համաձայնությունը այն մասին, որ Օպերատորն իրավունք ունի ստանալու տեղեկատվություն անմիջապես թողարկողի գործունեության վերահսկումը իրականացնող մարմիններից և տվյալ արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված կամ կենտրոնացված հաշվառումն իրականացնող անձանցից՝ ինչպես ցուցակման գործընթացի ժամանակ, այնպես էլ Օպերատորի կողմից կազմակերպված շուկաներում թողարկողի արժեթղթերի շրջանառության ողջ ժամանակահատվածում:

3) թողարկողի կողմից գրավոր հաստատումը, որ թողարկողի տնտեսական գործունեությունից բխող բոլոր գործարքները թողարկողին վերահսկող ընկերության կամ նրա կողմից վերահսկող այլ ընկերությունների հետ կնքվում են տնտեսական համընդանուր սկզբունքներից ելնելով (թողարկողին վերահսկող ընկերության առկայության դեպքում):

4) թողարկողին վերահսկող ընկերության կողմից տրված գրավոր հաստատումը, որ այն հետևելու է Օպերատորի կանոնների դրույթերին: Եթե թողարկողին վերահսկող ընկերությունը իր հերթին պատկանում է որևէ խմբին, ապա նաև այդ խմբի գլխավոր ընկերության Օպերատորի կանոնների դրույթերի հետևելու մասին համաձայնությունը (թողարկողին վերահսկող ընկերության առկայության դեպքում):

5) նախորդ 3 (երեք) տարվա ընթացքում թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի հրապարակային թողարկման ազդագրերի և դրանց լրացումների (առկայության դեպքում) կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները, եթե դրանք ներկայացված չեն Օպերատորին:

63. Եթե Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված դեպքերում թողարկողը՝ Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին բավարարող ազդագրի կամ փաստաթղթի փոխարեն շահագրգիռ ներդրողներին ներկայացնում է այլ փաստաթուղթ, ապա այն առնվազն պետք է ներառի:

1) դիմային էջ, որը ներառում է փաստաթղթի անվանումը (օրինակ՝ «Հայտարարագիր ներդրողների համար», «Ծանուցում ներդրողներին» և այլն), թողարկողի անվանումը, թողարկված արժեթղթերի տեսակը (դասը), անվանական արժեքը և արժույթը, արժեթղթերի թողարկման և/կամ տեղաբաշխման ամսաթիվը, արժեթղթերի մարման ամսաթիվը կամ շրջանառության ժամկետը, այլ տեղեկություններ՝ թողարկողի հայեցողությամբ:

2) տեղեկություններ թողարկողի վերաբերյալ (անվանումը, կազմակերպական-իրավական

ձևը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ինտերնետային կայքը, այն ֆիզիկական անձի անվանումը, ում հետ կարելի է կապվել թողարկողին և արժեթղթերին առնչվող հարցերի դեպքում և նրա հեռախոսի համարը, թողարկողի գործունեության համառոտ պատմությունը, գործունեության նկարագիրը, օտարերկրյա թողարկողի դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչության (առանձնացված ստորաբաժանման)՝ եթե այդպիսիք կան, գտնվելու վայրը, կապի միջոցները.

- 3) եթե թողարկողից բացի առկա են արժեթղթերին վերաբերող հարցերում թողարկողի անունից (օտարերկրյա թողարկողի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում) հանդես գալու լիազորություններ ունեցող անձինք, ապա տեղեկություններ այդ անձանց և նրանց լիազորությունների վերաբերյալ.
- 4) թողարկողի կողմից հրապարակված առնվազն վերջին տարեկան՝ անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված, և Հայտի ներկայացման տարվա միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային՝ կախված թողարկողի ցանկությունից) ֆինանսական հաշվետվությունները և/կամ հղումներն այն ինտերնետային կայքին և/կամ դրա բաժնին, որտեղից շահագրգիռ անձինք կարող են անմիջական ծանոթանալ թողարկողի տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին և/կամ ստանալ դրանց պատճենները.
- 5) տեղեկություններ սույն կետի 4) ենթակետում նշված՝ թողարկողի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորների վերաբերյալ և հղումներն այն ինտերնետային կայքին և/կամ դրա բաժնին, որտեղից շահագրգիռ անձինք կարող են ծանոթանալ անկախ աուդիտորական եզրակացություններին և/կամ ստանալ դրանց պատճենները.
- 6) հղումներն այն ինտերնետային կայքին և/կամ դրա բաժնին, որտեղից շահագրգիռ անձինք կարող են ծանոթանալ թողարկողի կանոնադրությանը, արժեթղթերին վերաբերող տեղեկություններին և դրանց հետագա փոփոխություններին և/կամ ստանալ դրանց պատճենները.
- 7) ներդրողներին ներկայացված տեղեկությունների հետագա փոփոխությունների վերաբերյալ ներդրողներին տեղեկացման կարգը և պայմանները.
- 8) ամփոփ տեղեկություններ վերջին 3 տարիների ընթացքում թողարկողի կողմից նույն տեսակի այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ.
- 9) ռիսկային գործոնները, որոնք անհրաժեշտ են արժեթղթերի շուկայական ռիսկը գնահատելու համար.
- 10) թողարկողի ռազմավարությունը, արժեթղթերի թողարկման նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործման ուղղությունները.
- 11) տեղեկություններ արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) որոշում կայացնող մարմնի և նրա՝ նման որոշում կայացնելու լիազորությունների վերաբերյալ.
- 12) տեղեկություններ արժեթղթերի և արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ (արժեթղթերի տեսակը (դասը), անվանական արժեքը և արժույթը, տվյալ տեսակի (դասի) արժեթղթերի թողարկված քանակը, արժեթղթերի տեղաբաշխման կարգը, պայմանները և ժամկետները, պարտատոմսերի դեպքում՝ պարտատոմսերի տոկոսադրույքը և այդ տոկոսների հաշվարկման և վճարման ժամկետները և պայմանները, պարտատոմսերի եկամտաբերության հաշվարկման թողարկողի բանաձևը).
- 13) տեղեկություններ երկրորդային շուկայում արժեթղթերի շրջանառության և արժեթղթերի



մարման կարգի, պայմանների և ժամկետների, ինչպես նաև արժեթղթերի տոկոսագումարների կամ մարման գումարների վճարումները կատարող անձանց վերաբերյալ.

- 14) արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը.
- 15) տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքները հաշվառման կարգի և հաշվառումն իրականացնող մարմնի մասին.
- 16) արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը (միջազգային կազմակերպությունների պարտատոմսերի դեպքում՝ տեղեկություններ թողարկողի կամ վերջինիս վճարման գործակալի հարկային կարգավիճակի վերաբերյալ).
- 17) տեղեկություններ տեղաբաշխողների և Շուկա ստեղծողների (այդպիսի անձանց առկայության դեպքում) վերաբերյալ՝ ներկայացնելով, համապատասխանաբար, արժեթղթերի տեղաբաշխման կամ երկրորդային շուկայում իրացվելիություն ապահովման գործընթացներում նրանց գործառույթների շրջանակները, եթե այդ տեղեկությունները ներառված չեն ներդրողներին ներկայացվող փաստաթղթի այլ բաժիններում.
- 18) այլ տեղեկություններ՝ թողարկողի հայեցողությամբ:

64. Ներդրողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կարող է լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկատվություն պահանջել թողարկողից (այդ թվում՝ թողարկողի բաժնային արժեթղթերի հինգ և ավելի տոկոսի սեփականատերերի, ինչպես նաև վերջիններիս լիազոր ներկայացուցիչների կամ փոխկապակցված անձանց վերաբերյալ): Օպերատորն իրավունք ունի հրապարակել այդ լրացուցիչ փաստաթղթերը կամ տեղեկատվությունը Տեղեկատվական համակարգի միջոցով: Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից պահանջվող լրացուցիչ տեղեկատվության չներկայացումը հիմք է արժեթղթերի ցուցակման մերժման վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Եթե թողարկողը գտնում է, որ Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից պահանջված լրացուցիչ տեղեկության հրապարակումը կարող է զգալիորեն վնասել իր շահերը, նա իրավունք ունի Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնին, պահանջվող տեղեկատվության հետ մեկտեղ, ներկայացնել գրավոր դիմում համապատասխան տեղեկատվությունը չբացահայտելու վերաբերյալ՝ միաժամանակ նշելով պատճառները և հիմնավորումը:

65. Եթե մինչև Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից արժեթղթերի ցուցակման մերժման վերաբերյալ որոշման կայացնելը Օպերատորը ստանում է Հայտի որևէ լրացում, ապա այն համարվում է հայտի անբաժանելի մասը, իսկ հայտը համարվում է ներկայացված լրացման ներկայացման օրը:

Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից պահանջված լրացուցիչ փաստաթղթերը կամ տեղեկատվությունը չեն համարվում հայտի լրացում, եթե դրանք նախատեսված չեն Հայտում կամ դրան կից փաստաթղթերում ներառվող տեղեկությունների կամ փաստաթղթերի ցանկով:

66. Առանձին դեպքերում (այդ թվում՝ ցուցակված արժեթղթերի թողարկողի կողմից լրացուցիչ Հայտի ներկայացման և/կամ Օրենքով նախատեսված դեպքերում) Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը, Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու դեպքում, իրավունք ունի ցուցակման որոշում

կայացնել սույն գլխով սահմանված որոշ փաստաթղթերի բացակայության պարագայում, դրանք կամ դրանց փոխարեն շահագրգիռ ներդրողներին հասանելի այլ փաստաթուղթ՝ որոշմամբ սահմանված ժամկետում, ներկայացնելու պայմանով կամ առանց դրա:

#### **ԳԼՈՒԽ 14. Հայտին և կից ներկայացվող բոլոր փաստաթղթերին ներկայացվող պահանջները**

67. Հայտը պետք է ներառի սույն կանոններով սահմանված տեղեկությունները և կազմված լինի ԱՑ-1.1 ձևին համապատասխան:
68. Հայտին և դրան կից ներկայացվող բոլոր փաստաթղթերին ներկայացվում են հետևյալ պահանջները՝
- 1) Հայտը և դրան կից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հեշտ ընթեռնելի, գրական հայերենով (այլ լեզվով կազմված փաստաթղթերի դեպքում՝ դրանց բնօրինակը կամ պատճենը՝ զուգորդված հայերեն թարգմանությամբ՝ նոտարական վավերացմամբ) և լրացված տպագրական եղանակով.
  - 2) թղթային կրիչով ներկայացվող Հայտը պետք ստորագրված լինի թողարկողի խորհրդի անդամների մեծամասնության, գործադիր մարմնի ղեկավարի և ֆինանսական հաշվետվությունների կազմման ու վավերացման համար պատասխանատու անձի (գլխավոր հաշվապահի) կողմից.
  - 3) Հայտը՝ կից ներկայացվող փաստաթղթերի հետ միասին, պետք է միասնական փաթեթով կարված և վավերացված լինեն թողարկողի, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի կնիքով (կնիքի առկայության դեպքում),
  - 4) Հայտին կից ներկայացվող փաստաթղթերի փաթեթի թերթերը պետք է համարակալված լինեն.
  - 5) եթե անհնար է Հայտին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերում ներառվող որևէ փաստաթղթի բնօրինակի ներկայացումը, անհրաժեշտ է Հայտին կից ներկայացնել այդ փաստաթղթի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշագրումով, ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) թողարկողի իրավասու անձի կողմից:
69. Որպես լրացում ներկայացվող Հայտը և դրան կցված փաստաթղթերը (լրացումները) պետք է՝
- 1) ներկայացվեն սույն կանոնների 68.-րդ կետին (միջազգային կազմակերպությունների պարտատոմսերի ցուցակման դեպքում՝ սույն կանոնների 124.-րդ կետին) համապատասխան.
  - 2) պարունակեն կից ներկայացման ենթակա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը՝ բացառությամբ նախկինում պատշաճ ներկայացված կից փաստաթղթերի:

#### **ԳԼՈՒԽ 15. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի իրավասությունները**

70. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինն իրավասու է՝
- 1) որոշում կայացնել արժեթղթերի ցուցակման մասին.
  - 2) որոշում կայացնել արժեթղթեր ցուցակումը կասեցնելու կամ դադարեցնելու (ապացուցակման) վերաբերյալ՝ սույն կանոններով և Օպերատորի այլ կանոններով սահմանված դեպքերում.
  - 3) որոշում կայացնել արժեթղթերը Բորսայի մեկ ցուցակից այլ ցուցակ կամ Ազատ շուկա տեղափոխելու վերաբերյալ.

- 4) որոշում կայացնել արժեթղթերի ցուցակումը մերժելու վերաբերյալ.
  - 5) սույն կանոններով սահմանված կարգով որոշում կայացնել արժեթղթերի ցուցակումը վերաբերող որևէ բացառության կիրառման վերաբերյալ.
  - 6) Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու դեպքում, բացառություն անել թողարկողների և արժեթղթերի համար սույն կանոններով սահմանված պահանջներից, եթե առկա են բավարար նախադրյալներ, որ ողջամիտ ժամկետում այդ պահանջները կապահովվեն.
  - 7) որոշում կայացնել Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի իրավասությանը պատկանող այլ խնդիրների վերաբերյալ՝ Օրենքով, իրավական ակտերով և սույն կանոններով սահմանված կարգով:
71. Արժեթղթերի իրացվելիության ապահովման նպատակով Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը իրավունք ունի նաև ցուցակվման ներկայացված կամ ցուցակված արժեթղթերի թողարկողից պահանջել ապահովել այդ արժեթղթերի Շուկա ստեղծողի առկայությունը, եթե այդ հանգամանքն ապահովված չէ:

## **ԳԼՈՒԽ 16. Արժեթղթերի ցուցակման մասին որոշում**

72. Արժեթղթերի ցուցակման մասին որոշումը (այսուհետև՝ Ցուցակման որոշում) կամ արժեթղթերի ցուցակման մերժման մասին որոշում կայացնում է Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը՝ արժեթղթերի ցուցակման գործընթացի սկսման պահից երեք ամսվա ընթացքում: Եթե Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը ցուցակման գործընթացի ժամանակ թողարկողից պահանջում է լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր, ապա Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը Ցուցակման որոշումը կամ արժեթղթերի ցուցակման մերժման մասին որոշում է ընդունում՝ թողարկողից պահանջված ամբողջ տեղեկատվության ստացման պահից երեք ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ քան արժեթղթերի ցուցակման գործընթացի սկսման պահից վեց ամսվա ընթացքում:
73. Թողարկողի արժեթղթերն առևտրին թույլատրվում են Ցուցակման որոշման ուժի մեջ մտնելու օրվանից:
74. Եթե Ցուցակման որոշմամբ այլ բան նախատեսված չէ, ապա Օպերատորի կողմից կազմակերպված արժեթղթերի շուկաներում հայտերի (առաջարկների) ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարվում է Հայաստանի Հանրապետության դրամով: Առանձին դեպքերում, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված չէ, արժեթղթերն առևտրին թույլատրումը կարող է հայտագրվել Օպերատորի համար կիրառելի արտարժույթով: Այդ դեպքում Ցուցակման որոշման մեջ նշվում են նաև հայտերի (առաջարկների) ներկայացման և գործարքների վերջնահաշվարկի արժույթը, ընդ որում, որպես կանոն, նույն դասի արժեթղթերով հայտերի (առաջարկների) ներկայացման և գործարքների վերջնահաշվարկի համար սահմանվում է միևնույն արժույթը:
75. Ցուցակման որոշումն ուժի մեջ է մտնում դրա կայացման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը (ներառյալ), բացառությամբ, երբ՝ հաշվի առնելով ներդրողների շահերի պաշտպանության սկզբունքները, Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը ավելի երկար ժամկետ է սահմանում կամ եթե առկա են սույն կանոնների 77.-րդ կետով սահմանված դեպքերը: Մինչև ցուցակման որոշման ուժի մեջ մտնելը, առնվազն այդ որոշման ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրը, պետք է նաև Օրենքով և սույն կանոնների 42.-րդ կետով սահմանված կարգով

(միջազգային կազմակերպությունների պարտատոմսերի ցուցակման դեպքում՝ սույն կանոնների 124.-րդ կետով սահմանված կարգով) հրապարակված լինի ցուցակվող արժեթղթերի ազդագիրը (եթե դրա կիրառումը պարտադիր է) կամ՝ Օրենքով և/կամ սույն կանոններով սահմանված դեպքերում, ներդրողների համար նախատեսված այլ փաստաթուղթը:

76. Ցուցակման որոշման կայացումից հետո, մինչև դրա ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրը ներառյալ, թողարկողը պետք է Օպերատորի հետ կնքի ցուցակման ենթակա արժեթղթերն առևտրին թույլտվության պայմանագիր և Օպերատորին վճարի Օպերատորի «Սակագների մասին» կանոններով սահմանված՝ արժեթղթերի ցուցակման պահպանման վճարը:

Արժեթղթերի ցուցակման վերաբերյալ գրավոր պայմանագիրը պետք է կազմված լինի սույն կանոններին մասը կազմող ԱՑ-1.2 ձևին համապատասխան, որով՝ այլ կետերի հետ մեկտեղ, սահմանվում է նաև թողարկողի պարտականությունը՝ պահպանելու Օպերատորի կանոնների բոլոր դրույթները:

77. Եթե թողարկողն ոչ ավելի, քան 30 օրով, ուշացնում է սույն գլխի 76.-րդ կետով սահմանված պայմանագրի կնքումը, վճարների վճարումը կամ արժեթղթերի ազդագրի կամ՝ Օրենքով սահմանված դեպքերում, ներդրողների համար նախատեսված այլ փաստաթղթի հրապարակումը, ապա ցուցակման որոշումն ուժի մեջ է մտնում նշված բոլոր գործողությունների կատարման վերջին ամսաթվին հաջորդող աշխատանքային օրը:

Եթե թողարկողը սույն կետով ուշացման համար նախատեսված ժամկետում ևս չի ապահովում արժեթղթերի ցուցակման վերաբերյալ պայմանագրի կնքումը, վճարների վճարումը կամ արժեթղթերի առևտրի ազդագրի կամ՝ Օրենքով սահմանված դեպքերում, ներդրողների համար նախատեսված այլ փաստաթուղթի հրապարակումը, ապա Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը չեղյալ է ճանաչում ցուցակման որոշումը և արժեթղթերի ցուցակման մերժման մասին որոշում է կայացնում:

Սույն կետի 2-րդ պարբերությունում նախատեսված դեպքում Օպերատորը թողարկողին է վերադարձնում թողարկողի կողմից Օպերատորին վճարված արժեթղթերի ցուցակման պահպանման վճարները, եթե այդպիսիք կան:

78. Արժեթղթերի ցուցակման կամ ցուցակման մերժման վերաբերյալ որոշումը կայացնելիս, Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը հիմք է ընդունում արժեթղթերի ցուցակման համար սահմանված պայմանները և թողարկողի կողմից ներկայացվող փաստաթղթերում (այդ թվում՝ ազդագրում) արտացոլված տեղեկատվությունը, ինչպես նաև Օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կանոնների դրույթները:

79. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը իրավունք ունի մերժել արժեթղթերի ցուցակումը այն դեպքում, երբ չեն պահպանվել արժեթղթերի ցուցակման համար նախատեսված պայմանները, ինչպես նաև եթե թողարկողի կողմից ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկատվությունը անարժանահավատ կամ թերի է:

Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը իրավունք ունի մերժել արժեթղթերի ցուցակումը նաև այն դեպքում, երբ թողարկողը և թողարկված արժեթղթերը համապատասխանում են սույն կանոններով սահմանված պայմաններին, սակայն թողարկողի ֆինանսական վիճակի, շուկայական դիրքի, հաճախորդների կառուցվածքի, աճի պոտենցիալի, կառավարման համակարգի, գործունեության ոլորտի, համբավի, ապագա հեռանկարների գնահատման կամ թողարկողի տնտեսական գործունեության, ինչպես նաև էական այլ ցուցանիշների գնահատման արդյունքում Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը ունի հիմնավոր

կասկածներ, որ արժեթղթերի ցուցակման մերժումը անհրաժեշտ է ներդրողների շահերը պաշտպանելու համար:

Սույն կետի երկրորդ նախադասությամբ նախատեսված ցուցակման մերժման մասին որոշումը Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինն իրավունք ունի կայացնելու միայն Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու դեպքում: Արժեթղթերի ցուցակման մերժման դեպքում համապատասխան որոշման մեջ նշվում են մերժման հիմքերը:

80. Սույն կանոնների նպատակներից ելնելով, լրացուցիչ ցուցակման որոշումը ցուցակման որոշումն է, որի ընդունման պահին տվյալ արժեթղթերի ցուցակման համար դիմող թողարկողի որևէ արժեթուղթ արդեն իսկ ցուցակված է: Եթե Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը որոշում է կայացրել չբավարարել թողարկողի դիմումը լրացուցիչ ցուցակման վերաբերյալ, այն կարող է առաջնորդվել սույն կանոնների 99.-րդ կետի դրույթներով:
81. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից արժեթղթերի ցուցակման կամ ցուցակման մերժման վերաբերյալ որոշումը կազմվում է երկու բնօրինակից, որոնցից մեկը մնում է Օպերատորի մոտ, իսկ մյուսը որոշման ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է թողարկողին: Նույն ժամանակահատվածում ընդունված որոշման մասին գրավոր տեղեկացվում է նաև Կենտրոնական դեպոզիտարիան:  
Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի որոշումը պետք է պարունակի քննարկվող հարցի բնութագիրը, որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը և առկայության դեպքում՝ Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանության (թույլտվության) որոշման բովանդակությունը:
82. Արժեթղթերի ցուցակման կամ ցուցակման մերժման մասին որոշումը՝ որոշման կայացման հաջորդ օրը, հրապարակվում է Տեղեկատվական համակարգի միջոցով:

## **ԳԼՈՒԽ 17. Արժեթղթերի ցուցակման պահպանման ընդհանուր պայմանները**

83. Արժեթղթերի ցուցակման պահպանման համար թողարկողը պարտավոր է՝
  - 1) հաշվետու թողարկողների կողմից հաշվետվությունների ներկայացման (տեղեկությունների բացահայտման) համար Կենտրոնական բանկի կողմից նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետներում Օպերատորին ներկայացնել այդ ակտերով նախատեսված տարեկան հաշվետվությունները՝ հաստատված անկախ աուդիտորական եզրակացությամբ, միջանկյալ հաշվետվությունները և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները (էական փաստերի և տեղեկությունների հաշվետվություններ), բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից գաղտնի ճանաչված տեղեկությունների.
  - 2) Օպերատորի պահանջով՝ Օպերատորի կողմից սահմանված ողջամիտ ժամկետներում և կարգով, Օպերատորին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք Օպերատորի կարծիքով անհրաժեշտ են ներդրողների շահերի պաշտպանության կամ բացահայտված (հրապարակված) տեղեկատվության պարզաբանման կամ լրացման համար.
  - 3) ապահովել տվյալ դասի արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի ամրագրման համար Օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված անհրաժեշտ պայմանները,

- 4) սահմանված ժամկետներում կատարել ցուցակման պահպանման համար սահմանված պարտադիր վճարը.
  - 5) պահպանել Օրենքով և Օպերատորի կանոններով կարգավորվող շուկայում հրապարակայնորեն վաճառվող արժեթղթի նկատմամբ սահմանված այլ պահանջները.
  - 6) ցանկացած անձի պահանջով վերջինիս տրամադրել սույն կանոններով սահմանված հաշվետվությունները և բացահայտված էական փաստերի և տեղեկությունների փոփոխությունները՝ գանձելով միայն պատճենահանման ծախսերը:
84. Ցուցակված (ցուցակման ներկայացված) արժեթղթերի թողարկողի ֆինանսատնտեսական գործունեությունը պետք է ենթարկվի առնվազն տարեկան աուդիտորական ստուգման, իսկ այդ ստուգումը պետք է իրականացվի թողարկողներին ստուգելու ոլորտում բավարար փորձ և մասնագիտական հմտություններ ունեցող անկախ և վստահելի աուդիտորական կազմակերպության կողմից: Օպերատորի դիտորդ խորհուրդն իր որոշմամբ կարող է սահմանել հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձին ներկայացվող այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում ցանկալի է, որ ցուցակված արժեթղթերի կամ արժեթղթերի ցուցակման համար դիմող թողարկողի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթարկվեն աուդիտորական ստուգման այդ աուդիտն իրականացնող անձանց կողմից, եթե այլ բան սահմանված չէ Օրենքով:
85. Սույն կանոնների 83. կետի 1) ենթակետով սահմանված հաշվետվությունները և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները թողարկողների կողմից Օպերատորին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելով Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով, կամ էլեկտրոնային կրիչով՝ կից գրությամբ առձեռն հանձնելով Օպերատորին:
86. Սույն կանոնների 83. կետի 1) և 2) ենթակետերով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունների ներկայացման պահից Օպերատորն իրավունք ունի դրանք հրապարակել իր Տեղեկատվական համակարգում:
87. Եթե թողարկողը գտնում է, որ Օպերատորի կողմից պահանջած լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկությունների հրապարակումը կարող է զգալիորեն վնասել իր շահերը, նա իրավունք ունի Օպերատորին, պահանջվող տեղեկատվության հետ մեկտեղ, ներկայացնել գրավոր դիմում համապատասխան տեղեկատվությունը չբացահայտելու վերաբերյալ, միաժամանակ նշելով պատճառները և հիմնավորումը: Օպերատորը կարող է չբավարարել թողարկողի դիմումը, եթե թողարկողի հիմնավորումը բավարար չէ, կամ եթե լրացուցիչ փաստաթղթերի կամ տեղեկությունների հրապարակումը անհրաժեշտ է ներդրողների շահերի պաշտպանության տեսանկյունից:
88. Եթե թողարկողն իրականացնում է ցուցակված բաժնետոմսերի նույն դասին պատկանող բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում (տեղաբաշխում), որոնք պետք է շրջանառվեն Հայաստանի Հանրապետությունում, ապա թողարկողը պետք է սույն կանոններով սահմանված կարգով դիմի Օպերատորին՝ այդ լրացուցիչ բաժնետոմսերի ցուցակման համար: Թողարկողը պետք է նոր բաժնետոմսերի Հայտը ներկայացնի նոր թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հաստատելուց հետո 3 (երեք) ամսվա ընթացքում: Նոր բաժնետոմսերի Հայտը ներկայացնելիս նոր թողարկված բաժնետոմսերը պետք է արդեն փոխանցված լինեն դրանց գնորդների հաշիվներին:

89. Եթե արժեթուղթը որևէ պատճառով ապացուցակվում է, ապա արժեթղթերի ցուցակման պահպանման համար Օպերատորին վճարված պարտադիր վճարի որևէ մաս չի վերադարձվում թողարկողին:

### **ԳԼՈՒԽ 18. Բաժնետոմսերի ցուցակման պահպանման լրացուցիչ պայմանները**

90. Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) և երկրորդային (B) ցուցակներում ընդգրկված բաժնետոմսերի թողարկողները պարտավոր են նաև՝

- 1) մինչև յուրաքանչյուր տարեկան ժողովի հրավիրման մասին ծանուցումը կամ ծանուցմանը զուգահեռ, առնվազն իր կայքէջում, տարեկան հաշվետվություն հրապարակել իր կողմից ընդունված կորպորատիվ կառավարման կանոնագրքի դրույթներին հետևելու և այդ դրույթներին իր համապատասխանության մակարդակի մասին.
- 2) Օպերատորին ներկայացնել բաժնետերերի ռեեստրը ավարտված տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ՝ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում.
- 3) Օպերատորին ներկայացնել հանրությանը պատկանող բաժնեմասի չափի վերաբերյալ տեղեկանքում ներառնվող տեղեկությունների փոփոխությունները ավարտված ամսվա վերջին օրվա դրությամբ կամ հավաստիացում առ այն, որ նշված օրվա դրությամբ փոփոխություններ չեն եղել՝ յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

91. Եթե որևէ անձ բաժնետոմսեր ցուցակված թողարկողի բաժնետիրական կապիտալում տիրապետում է ազատ շրջանառող բաժնետոմսերով ներկայացված քվեարկող ձայների ավելի քան 50%-ին (հիսուն տոկոսին), և վերջինիս կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը ձեռք են բերվել զգալիորեն ավելի բարենպաստ գնով, քան բաժնետոմսերի շուկայական գինն է, ապա Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը իրավունք ունի մերժել թողարկողի արդեն իսկ ցուցակված բաժնետոմսերի տվյալ դասին պատկանող նոր բաժնետոմսերի ցուցակումը: Մերժման դեպքում Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կարող է կիրառել սույն կանոնների 99.-ին կետով սահմանված իրավասությունները:

92. Սույն կանոնների 91. կետում նշված նոր բաժնետոմսերի գինը համարվում է շուկայական գնից զգալիորեն բարենպաստ, եթե նոր բաժնետոմսերի վաճառքի գինը առնվազն 10%-ով (տաս տոկոսով) ցածր է արդեն ցուցակված նույն դասի բաժնետոմսերի՝ նոր բաժնետոմսերի թողարկման որոշման օրվան նախորդող վերջին 10 (տաս) առևտրային օրերին, Բորսայում գրանցված փակման գների միջին կշռվածից:

### **ԳԼՈՒԽ 19. Թողարկողի արժեթղթերին «դիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհումը**

93. Թողարկողի արժեթղթերին «դիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհման նպատակն է առևտրի մասնակիցների ուշադրությունը հրավիրել այն կարևոր հանգամանքներին կամ փաստերին, որոնք կապված են թողարկողի կամ նրա կողմից թողարկված արժեթղթերի հետ:

94. Թողարկողի արժեթղթերին «դիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհվում է հետևյալ դեպքերում՝

- 1) թողարկողի գործունեության տեսակի փոփոխության դեպքում, որը կարող է էական ազդեցություն ունենալ թողարկողի կամ նրա կողմից թողարկված արժեթղթերի վրա.

- 2) թողարկողի վերակազմակերպման դեպքում.
  - 3) թողարկողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դեպքում.
  - 4) ինքնական լուծարման, դատարանի կողմից սնանկության վարույթի հարուցման դեպքերում.
  - 5) եթե թողարկողի տնտեսական կամ իրավական կարգավիճակը վտանգում է ներդրողների շահերը.
  - 6) արժեթղթերը ապացուցակելու մասին թողարկողի կողմից դիմում ներկայացնելիս.
  - 7) արժեթղթերի ապացուցակման գործընթաց սկսելիս.
  - 8) եթե թողարկողի արժեթղթերին «դիտարկման ենթակա» կարգավիճակ շնորհելն անհրաժեշտ է ներդրողների շահերի պաշտպանության համար.
  - 9) եթե թողարկողի արժեթղթերին «դիտարկման ենթակա» կարգավիճակ շնորհելը պահանջվում է Կենտրոնական բանկի կողմից:
95. Թողարկողի արժեթղթերին «դիտարկման ենթակա» կարգավիճակ շնորհելու կամ այդ կարգավիճակը դադարեցնելու վերաբերյալ Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի որոշման մասին անմիջապես հրապարակվում է Տեղեկատվական համակարգով, իսկ որոշումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղղարկվում է թողարկողին էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով կամ պատվիրված նամակով:
96. Թողարկողի արժեթղթերին «դիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհումը հիմք չէ սույն կանոններով սահմանված պարտավորությունների չկատարման համար:
97. Թողարկողը պարտավոր է Օպերատորին անմիջապես տեղեկացնել «դիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհման համար հիմք հանդիսացած հանգամանքներում կատարված էական փոփոխությունների վերաբերյալ:

## **ԳԼՈՒԽ 20. Արժեթղթերի ցուցակման կասեցումը**

98. Եթե արժեթղթերի ցուցակման պահպանման ընթացքում Բորսայի որևէ ցուցակում ընդգրկված արժեթուղթը (դրա թողարկողը) չի բավարարում Բորսայի տվյալ ցուցակի համար կանոններով սահմանված որևէ պահանջին կամ առկա են ներդրողների շահերը վնասելու այլ ռիսկեր, ապա Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կարող է արժեթղթերի ցուցակման կասեցման որոշում ընդունել:
- Ցուցակման կասեցման որոշմամբ սահմանվում է կասեցման ժամանակահատվածը և/կամ այն պայմանները, որոնք պետք է ապահովի տվյալ արժեթղթերի թողարկողը կասեցումը վերացնելու համար:
- Մեկ ֆինանսական տարվա ընթացքում տվյալ արժեթղթերի ցուցակման կասեցման ընդհանուր ժամանակահատվածը չի կարող գերազանցել երեք ամիսը: Եթե նշված ժամկետում թողարկողը չի ապահովում կամ ի վիճակի չէ ապահովել արժեթղթերի ցուցակման կասեցման վերացման համար անհրաժեշտ պայմանները, ապա տվյալ արժեթղթերը ենթակա են այլ ցուցակ կամ Ազատ շուկա տեղափոխման (եթե հնարավոր է) կամ ապացուցակման:
99. Եթե տվյալ արժեթղթերի թողարկողը չի ներկայացրել Օպերատորի կանոններով սահմանված հաշվետվությունները, կամ ներկայացված հաշվետվությունների և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունների ստուգման ընթացքում հայտնաբերվել են անարժանահավատ տեղեկություններ կամ տվյալ արժեթղթերի թողարկողը թույլ է տվել Օրենքով կամ Օպերատորի կանոններով սահմանված պահանջների այլ խախտում, ապա այդ



արժեթղթերի ցուցակումը կարող է կասեցվել նաև Օպերատորի վերահսկողական գործողությունները կանոնակարգող ակտերով սահմանված կարգով:

100. Թողարկողը իրավունք ունի Օպերատորին ներկայացնել իր արժեթղթերի ցուցակման ժամանակավոր կասեցման դիմում: Դիմումում պետք է պարունակի արժեթղթերի ցուցակման կասեցման անհրաժեշտությունը հիմնավորող մանրամասն պատճառաբանումները, ինչպես նաև ցուցակման կասեցման ակնկալվող տևողությունը և ժամկետները:  
Թողարկողի նախաձեռնությամբ արժեթղթերի ցուցակման ժամանակավոր կասեցման ժամկետը մեկ ֆինանսական տարվա ընթացքում չի կարող գերազանցել մեկ ամիսը:  
Թողարկողի կողմից արժեթղթերի ցուցակման կասեցման դիմումն ընդունվում կամ մերժվում է Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից: Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից ընդունված դրական որոշման մեջ նշվում է արժեթղթերի ցուցակման ժամանակավոր կասեցման ժամկետը, ինչպես նաև այն հիմքերը, որոնց հիման վրա կայացվել է որոշումը:
101. Ցուցակման կասեցման վերաբերյալ որոշումը կազմվում է երկու բնօրինակից, որոնցից մեկը մնում է Օպերատորի մոտ, իսկ մյուսը որոշման ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է թողարկողին:
102. Ցուցակման կասեցումը վերացվում է Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի որոշմամբ, որը կայացվում և հրապարակվում է տվյալ կասեցման հիմքի վերացումը և այդ փաստը հավաստիացնող փաստաթուղթն Օպերատորին տրամադրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:
103. Ցուցակման կասեցումը հիմք չէ թողարկողի կողմից արժեթղթերի ցուցակման պահպանման համար Օպերատորի կանոններով սահմանված պահանջները չկատարելու համար:
104. Սույն կանոններից բխող թողարկողի պարտականությունները շարունակում են գործել նաև թողարկողի արժեթղթերի ցուցակման կասեցման ժամանակահատվածում: Այն թողարկողը, որի արժեթղթերի ցուցակումը կասեցվել է, պարտավոր է արժեթղթերի ցուցակման կասեցման ողջ ժամանակահատվածի ընթացքում շարունակաբար տեղեկացնել Օպերատորին ցուցակման կասեցման հիմք հանդիսացող հանգամանքների զարգացման, փոփոխման և վերանայման հնարավորության վերաբերյալ:
105. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը արժեթղթերի ցուցակման կասեցման, ինչպես նաև կասեցման վերացման վերաբերյալ որոշումների ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է դրանց մասին հրապարակի Տեղեկատվական համակարգի միջոցով:
106. Ցուցակման կասեցման վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## **ԳԼՈՒԽ 21. Արժեթղթերի ապացուցակումը**

107. Բորսայում արժեթուղթը կարող է ապացուցակվել և նրա առևտուրը դադարեցվել, եթե՝
  - 1) Օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից ուժը կորցրած է համարվել առևտրի ազդագրի գրանցումը.
  - 2) թողարկողը կամ վերջինիս կողմից թողարկված արժեթղթերը չեն բավարարում Բորսայում ցուցակման պահանջներին.
  - 3) իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում կատարվել է թողարկողի դադարման կամ լուծարման մասին գրառում.

- 4) 90 օր տևողությամբ անընդհատ ժամանակահատվածի ընթացքում չի վերացվել տվյալ արժեթղթի ցուցակման կասեցման հիմքը.
  - 5) լրացել է տվյալ արժեթղթի շրջանառության ժամկետը.
  - 6) տվյալ արժեթուղթը փոխարկվել է այլ դասի արժեթղթով.
  - 7) թողարկողի կողմից որոշում է կայացվել ընկերության լուծարման վերաբերյալ կամ դատարանի կողմից հարուցվել է սնանկության վարույթ.
  - 8) արժեթղթերի սեփականատերերի թիվը այնքան փոքր է, որ շուկան չի կարողանա պատշաճ գործել.
  - 9) թողարկողի տնտեսական կամ իրավական կարգավիճակը կարող է վտանգել ներդրողների շահերը.
  - 10) թողարկողը վերակազմակերպվել է, բացառությամբ վերակազմակերպման այն դեպքերի, երբ ցուցակված արժեթղթերը պահպանում են իրենց դասը.
  - 11) Օպերատորի վերահսկողական գործողությունները կանոնակարգող կանոններով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է ընդունվել արժեթղթերի ապացուցակման մասին.
  - 12) թողարկողի կողմից իր արժեթղթերի ապացուցակման վերաբերյալ դիմում է ներկայացվել:
108. Սույն կանոնների 107.-րդ կետով սահմանված որևէ հիմքի առկայության դեպքում (բացառությամբ սույն կանոնների 107.-րդ կետի 11) և 12) ենթակետերով սահմանված հիմքերի) Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինն առաջնորդվում է սույն կանոնների 25.-րդ և 26.-րդ կետերի դրույթներով:
109. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը իրավունք ունի մերժել արժեթղթերի ապացուցակումը՝ թողարկողի կողմից ներկայացված դիմումի հիմքով, եթե գտնում է, որ արժեթղթերի ապացուցակումը կարող է էական ռիսկի ենթարկել ներդրողների շահերը կամ արժեթղթերի սեփականատերերի մի մասին անարդար առավելություններ կտա այլ սեփականատերերի նկատմամբ կամ հաշվին, կամ արժեթղթերի սեփականատերերի մի մասին անարդար կերպով շահույթի ստացման հնարավորություն կընձեռվի այլ սեփականատերերի հաշվին:
110. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը՝ արժեթղթերի ապացուցակման մասին թողարկողի դիմումի վերաբերյալ դրական կամ բացասական որոշում է ընդունում դիմումի ներկայացման օրվանից երեք ամսվա ընթացքում: Եթե Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը թողարկողի դիմումի քննարկման ընթացքում թողարկողից պահանջում է հավելյալ տեղեկություն, կամ եթե Օպերատորի կողմից թողարկողի նկատմամբ վերահսկման գործ է սկսվել, կամ թողարկողին վերաբերվող այլ կարևոր գործընթացները դեռ ընթացքում են, Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը որոշումը կայացնում է բոլոր անհրաժեշտ հավելյալ տեղեկությունների ներկայացման կամ վերահսկման գործի ավարտից, կամ թողարկողի կողմից այլ կարևոր հանգամանքների մասին տեղեկատվության բացահայտումից հետո երեք ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ապացուցակման դիմումի ստացման պահից վեց ամիս անց:
111. Եթե Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը որևէ որոշում չի կայացնում սույն կանոնների 110. կետում սահմանված ժամկետում, ապա արժեթղթերի ապացուցակման վերաբերյալ թողարկողի դիմումը համարվում է մերժված:

112. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կարող է արժեթղթերի ապացուցակման մասին թողարկողի դիմումի վերաբերյալ դրական կամ բացասական որոշում ընդունել միայն Օպերատորի դիտորդ, խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում:
113. Բորսայում արժեթղթերի ապացուցակման մասին որոշումը կազմվում է երկու բնօրինակից, որոնցից մեկը մնում է Օպերատորի մոտ, իսկ մյուս որոշումն ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է թողարկողին:
114. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը արժեթղթերի ապացուցակման վերաբերյալ որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հրապարակում է իր Տեղեկատվական համակարգի միջոցով:
115. Արժեթղթերի ապացուցակման մասին որոշումն ուժի մեջ է մտնում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
116. Եթե Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը չի բավարարում արժեթղթերի ապացուցակման մասին թողարկող դիմումը, կամ որոշում չի կայացնում սույն կանոնների 110. կետում նշված ժամանակահատվածում, թողարկողը իրավունք ունի վիճարկել Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի գործողությունները դատական կարգով:
117. Օպերատորի վերահսկողական գործողությունները կանոնակարգող կանոններով սահմանված դեպքերում արժեթղթերի ապացուցակումն իրականացվում է այդ կանոններով սահմանված կարգով:

## **ԳԼՈՒԽ 22. Միջազգային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի ցուցակման առանձնահատկությունները**

118. Միջազգային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի ցուցակման դեպքում չեն կիրառվում սույն կանոնների 42-րդ, 43-րդ, 44-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ կետի 8) - 11) ենթակետերով, 64-րդ, 68-րդ, 72-րդ կետերով, 76-րդ կետի երկրորդ նախադասությամբ, 83-րդ կետով, 84-րդ կետի երկրորդ նախադասությամբ, 85-րդ կետով, 107-րդ կետի 8)-րդ ենթակետով սահմանված պահանջները: Նշված պահանջների փոխարեն միջազգային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի ցուցակման դեպքում կիրառվում են սույն գլխով սահմանված պահանջները:
119. Արժեթղթերի ցուցակման նպատակով միջազգային կազմակերպությունը (դրա լիազորված անձը) Հայտին կից ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝
  - 1) Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները բավարարող ազդագիրը (եթե դրա կիրառումը պարտադիր է կամ թողարկողն ինքնակամ օգտագործում է այն) կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթուղթը, եթե այն արդեն ներկայացված չէ Օպերատորին: Ընդ որում, որոշ տեղեկություններ հայերեն ներկայացնելու կամ հրապարակելու անհնարինության դեպքում՝ ներդրողներին համար նախատեսված փաստաթղթի դիմային էջը, աչքի ընկնող տառատեսակով, պետք է պարունակի տեղեկացում ներդրողներին այն մասին, որ եթե տեղեկությունների հայերեն չներկայացումը ներդրողների համար էական կարող է լինել ներդրումային որոշումներ կայացնելու համար, ապա նրանք պետք է ձեռնպահ մնան տվյալ արժեթղթերում ներդրում կատարելուց.
  - 2) ազդագրի գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշման կամ համաձայնության պատճենը՝ եթե դրանց առկայությունը նախատեսված է Օրենքով.

- 3) արժեթղթերի թողարկման և արժեթղթերի ցուցակման հետ կապված փաստաթղթերի ստորագրման իրավունք ունեցող անձանց իրավասությունները հավաստող փաստաթղթերը,
  - 4) իրավասու մարմնի կողմից արժեթղթերին շնորհված տարբերակիչ ծածկագրի կամ տվյալ արժեթղթերի միանշանակ նույնականացումն ապահովող այլ համարժեք կողի շնորհումը հավաստող փաստաթուղթ՝ տարբերակիչ ծածկագրի (կողի) նշումով, եթե այն արդեն ներկայացված չէ Օպերատորին.
  - 5) պարտատոմսերի մարման վճարումների և տոկոսային վճարումների կատարման ժամանակացույցը, ինչպես նաև երկրորդային շուկայում պարտատոմսերի եկամտաբերության հաշվարկման բանաձևը, եթե այդ տեղեկությունները ներառված չեն ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն ներկայացված չեն Օպերատորին,
  - 6) այլ փաստաթղթեր և տեղեկություններ՝ թողարկողի հայեցողությամբ:
120. Միջազգային կազմակերպության Հայտը և դրան կից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝
- 1) Հայտը և դրան կից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հեշտ ընթեռնելի և լրացված տպագրական եղանակով.
  - 2) սույն կանոնների 119-րդ կետի 1) և 2) ենթակետով սահմանված փաստաթղթերը պետք է լինեն առնվազն գրական հայերենով (այլ լեզվով կազմված փաստաթղթերի դեպքում՝ դրանց բնօրինակը կամ պատճենը՝ զուգորդված նոտարական վավերացված հայերեն թարգմանությամբ).
  - 3) Հայտը և դրան կից ներկայացվող այլ փաստաթղթերը պետք է լինեն հայերեն, անգլերեն կամ ռուսերեն: Եթե սույն կանոնների 119-րդ կետի 3) ենթակետով սահմանված փաստաթղթերը չեն ներկայացվում հայերեն (այդ թվում՝ նոտարական վավերացված հայերեն թարգմանությամբ), ապա դրանք պետք է ներկայացվեն ապոստիլով.
  - 4) թղթային կրիչով ներկայացվող Հայտը պետք ստորագրված լինի թողարկողի անունից Հայտը ստորագրելու իրավասություն ունեցող անձի կողմից:
121. Միջազգային կազմակերպության կողմից թողարկված պարտատոմսերի ցուցակման մասին որոշումը կամ պարտատոմսերի ցուցակման մերժման մասին որոշումը Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կայացնում է պարտատոմսերի ցուցակման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալու օրվան հաջորդող 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:
122. Միջազգային կազմակերպության հետ արժեթղթերի ցուցակման վերաբերյալ գրավոր պայմանագիրը կարող է տարբերվել սույն կանոններին մասը կազմող ԱՑ-1.2 ձևից:
123. Պարտատոմսերի ցուցակման պահպանման համար միջազգային կազմակերպությունները պարտավոր են՝
- 1) նախորդ հաշվետու տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում կամ՝ այլ բորսաներում ցուցակված արժեթղթեր ունենալու դեպքում, որևէ բորսայում ներկայացնելուց կամ հրապարակումից հետո անմիջապես իր ինտերնետային կայքում հրապարակել անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և Օպերատորին տեղեկացնել այդ հաշվետվությունների հրապարակման վերաբերյալ՝ ներկայացնելով նաև ինտերնետային այն հասցեն, որտեղից կարելի է ծանոթանալ կամ ստանալ այդ հաշվետվությունները, եթե թողարկողն

ազդագրով կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթով ներդրողներին տեղեկացման այլ կարգ չի սահմանել.

- 2) կիսամյակի (կամ թողարկողի ցանկությամբ՝ յուրաքանչյուր եռամսյակի) ավարտից հետո 2 ամսվա ընթացքում կամ՝ այլ բորսաներում ցուցակված արժեթղթեր ունենալու դեպքում, որևէ բորսայում ներկայացնելուց կամ հրապարակումից հետո անմիջապես իր ինտերնետային կայքում հրապարակել միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և Օպերատորին տեղեկացնել այդ հաշվետվությունների հրապարակման վերաբերյալ՝ ներկայացնելով նաև ինտերնետային այն հասցեն, որտեղից կարելի է ծանոթանալ կամ ստանալ այդ հաշվետվությունները, եթե թողարկողն ազդագրով կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթով ներդրողներին տեղեկացման այլ կարգ չի սահմանել.
  - 3) սույն կանոնների 63.-րդ կետի 12) – 16) ենթակետերում նախատեսված և ազդագրում կամ ներդրողների համար նախատեսված (հասանելի) այլ փաստաթղթում ներառված տեղեկություններում փոփոխություններ տեղի ունենալուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում հրապարակել և Օպերատորին ներկայացնել նշված փոփոխությունները հայերեն՝ ներկայացնելով նաև ինտերնետային այն հասցեն, որտեղ հրապարակված են այդ փոփոխությունները, եթե թողարկողն ազդագրով կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթով ներդրողներին տեղեկացման այլ կարգ չի սահմանել,
  - 4) ապահովել տվյալ դասի արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի ամրագրման համար Օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված անհրաժեշտ պայմանները,
  - 5) սահմանված ժամկետներում կատարել ցուցակման պահպանման համար սահմանված պարտադիր վճարը.
  - 6) պահպանել Օրենքով և Օպերատորի կանոններով կարգավորվող շուկայում հրապարակայնորեն վաճառվող արժեթղթի նկատմամբ սահմանված այլ պահանջները:
124. Եթե միջազգային կազմակերպությունը սույն կանոնների 123. կետի համաձայն պարտավոր է Օպերատորին ներկայացնել այդ կետով սահմանված տեղեկացումները և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները, ապա դրանք միջազգային կազմակերպության կողմից Օպերատորին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելով Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին:
125. Միջազգային կազմակերպությունից ստացված և դրա կողմից թողարկված պարտատոմսերի ցուցակմանը և շրջանառությանը վերաբերող տեղեկությունները և/կամ փաստաթղթերն հրապարակվում են Օպերատորի կողմից՝ Օպերատորի ինտերնետային կայքում, տեղեկությունների և/կամ փաստաթղթերի ստացման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

### ԲԱԺԻՆ III. ԱԶԱՏ ՇՈՒԿԱ

#### **ԳԼՈՒԽ 23. Ազատ շուկայում արժեթղթերի առևտրին թույլտվությունը, թույլտվության պահպանումը, կասեցումը և դադարեցումը**

126. Ազատ շուկայում արժեթղթերի առևտրին թույլտվության, առևտրին թույլտվության պահպանման, առևտրին թույլտվության կասեցման և դադարեցման համար կիրառվում են սույն գլխի և սույն կանոնների 1-ին և 2-րդ բաժինների դրույթներով սահմանված պահանջները և չափանիշները, առանց սույն կանոնների 2-րդ բաժնի 9, 10, 11, 12 և 18-րդ գլուխներով, ինչպես նաև 8-րդ գլխի 41.-րդ, 44.-րդ, 47.-րդ, 48.-րդ և 49.-րդ կետերով սահմանված պահանջների և չափանիշների պարտադրանքի: Դրամական շուկայի գործիքների դեպքում չեն կիրառվում նաև սույն կանոնների 19-րդ գլխի դրույթները:
127. Ազատ շուկայում արժեթղթերի առևտրին թույլտվության, առևտրին թույլտվության պահպանման, առևտրին թույլտվության կասեցման և դադարեցման համար սույն կանոնների 1-ին և 2-րդ բաժինների դրույթները կիրառելիս «Բորսա» բառի փոխարեն պետք է կիրառել «Ազատ շուկա» բառը, իսկ «ցուցակել», «ցուցակում», «ցուցակման», «ապացուցակում» և «ցուցակված» բառերի փոխարեն պետք է կիրառել համապատասխանաբար՝ «առևտրին թույլտվություն տալ» կամ «թույլատրել առևտրին», «առևտրին թույլտվություն», «առևտրին թույլտվության», «առևտրին թույլտվության դադարեցում» և «առևտրին թույլտվություն ստացած» բառակապակցությունները:
128. Պարտատոմսերի ազատ շուկայում (Cbond) առևտրին թույլտվություն չեն կարող ստանալ այն պարտատոմսերը, որոնց թողարկողը ճանաչվել է անվճարունակ կամ գտնվում է լուծարման գործընթացում, այդ թվում՝ սնանկության հետևանքով:
129. Պարտատոմսերի ազատ շուկայում (Cbond) առևտրին թույլտվության ներկայացված այն կորպորատիվ պարտատոմսերի համար, որոնց համար կիրառելի են Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված դրույթները, դրանց թողարկողի միջնորդությամբ կարող են չկիրառվել ազդագրին վերաբերող սույն կանոններով սահմանված դրույթները, եթե նշված կորպորատիվ պարտատոմսերի թողարկողը՝
- 1) ազդագրի փոխարեն Հայտին կից ներկայացնում է շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթուղթ, որն առնվազն ներառում է սույն կանոններով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ պարտատոմսերի և պարտատոմսեր թողարկողի մասին տեղեկությունները.
  - 2) մինչև առևտրին թույլտվության վերաբերյալ որոշման կայացումը ներկայացնում է Հայտի ներկայացման տարվա միջանկյալ հաշվետվությունները՝ կազմված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, եթե բացակայում են սույն կետի 1) ենթակետին համապատասխան ներկայացված փաստաթղթերում, եթե սույն կանոններով այլ բան սահմանված չէ:

## ԲԱԺԻՆ IV. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱ

### ԳԼՈՒԽ 24. Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի առևտրին թույլտվությունը

130. Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված (տեղաբաշխված) պարտատոմսերի՝ Պետական պարտատոմսերի շուկայում, առևտրին թույլտվության համար տվյալ դասի պարտատոմսերի թողարկողը կամ այդ պարտատոմսերը Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին թույլտվության ներկայացնելու իրավասություն ունեցող անձը (սույն գլխի համատեքստում այսուհետև՝ Իրավասու անձ)՝ «Սի Բի Էյ Նեթ» կամ Օպերատորի կողմից ընդունելի և պատշաճ պաշտպանությամբ ապահովված այլ էլեկտրոնային համակարգով կամ առձեռն, Օպերատորին է ներկայացնում տեղեկացում, որը պետք է բացահայտի հետևյալ տեղեկությունները՝
- 1) պարտատոմսերի տեսակը (դասը).
  - 2) պարտատոմսերին շնորհված գրանցման համարը կամ այլ համարժեք կոդը.
  - 3) պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը.
  - 4) պարտատոմսերի տեղաբաշխման ընդհանուր ծավալը.
  - 5) պարտատոմսերի տեղաբաշխման տարին, ամիսը, ամսաթիվը.
  - 6) պարտատոմսերի մարման տարին, ամիսը, ամսաթիվը.
  - 7) տեղաբաշխված պարտատոմսերի (դրանց արժեկտրոնի) տարեկան եկամտաբերությունը.
  - 8) տեղեկություններ պարտատոմսերի մասնակի մարումների վերաբերյալ (առկայության դեպքում).
  - 9) տեղեկություններ արժեկտրոնների վճարման կարգի և/կամ ժամկետների վերաբերյալ (առկայության դեպքում).
  - 10) տեղեկություններ պարտատոմսերի շրջանառության սահմանափակումների վերաբերյալ (առկայության դեպքում):
131. Սույն կանոնների 130.-րդ կետում նշված տեղեկացումը (սույն բաժնի համատեքստում նաև՝ տեղեկացում) ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ իրավասու ստորաբաժանման ներկայացմամբ, Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի որոշմամբ (որոշումը՝ մեկ օրինակից) սույն գլխում նշված պարտատոմսերին շնորհվում է արժեթղթերի հապավումը և դրանք թույլատրվում են Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին: Եթե ներկայացված տեղեկացումը լիարժեք չէ կամ պարունակում է ակնհայտ անհամապատասխանություններ, ինչի մասին տեղեկացվում է թողարկողը և/կամ Իրավասու անձը, ապա Օպերատորի կողմից այդ տեղեկացումն ստացված է համարվում դրա լիարժեք տարբերակի ստացման օրը:
132. Եթե այլ պայմանավորվածություն չկա Օպերատորի և թողարկողի կամ Իրավասու անձի միջև, ապա սույն գլխում նշված պարտատոմսերի երկրորդային շուկայում եկամտաբերության հաշվարկման համար Օպերատորը հիմք է ընդունում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ նման պարտատոմսերի եկամտաբերության հաշվարկման կարգը:
133. Սույն կանոնների 131-րդ կետում նշված որոշման մասին Օպերատորը անմիջապես հրապարակում է տեղեկատվական համակարգով և ձեռնարկում է անհրաժեշտ

գործողություններ՝ այդ որոշմամբ առևտրին թույլատրված պարտատոմսերով որոշման կայացման օրվա առևտրային նստաշրջանի, իսկ անհնարինության դեպքում, հաջորդ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգով այդ արժեթղթերով գործարքներ կնքելու հնարավորության ապահովման համար:

134. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կարող է սույն կանոնների 131.-րդ կետում նշված ժամկետում մերժել սույն գլխում նշված պարտատոմսերի՝ Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին թույլտվությունը, եթե այդ պարտատոմսերը չեն համապատասխանում սույն կանոնների 3-րդ գլխով նախատեսված պահանջներին:
135. Թողարկողը կամ Իրավասու անձը պարտավոր է արդիական պահել Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին թույլտվություն ստացած պարտատոմսերի վերաբերյալ ներկայացված տեղակացմամբ նախատեսված տեղեկությունները, և այդ տեղեկությունների հնարավոր կամ տեղի ունեցած փոփոխությունների մասին անմիջապես տեղեկացնել Օպերատորին:
136. Սույն կանոնների 135.-րդ կետում նշված տեղեկությունների ստացումից անմիջապես, իսկ անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ առևտրային նստաշրջանի բացումը, Օպերատորը տեղեկատվական համակարգով հրապարակում է ստացված տեղեկատվությունը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ առանց Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի լրացուցիչ որոշման, առևտրային համակարգում կատարում է պարտատոմսերին վերաբերող տեղեկությունների համապատասխան փոփոխությունները:
137. Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը կարող է՝ մինչև սույն կանոնների 135.-րդ կետում նշված տեղեկությունների ստացումը, սակայն առվելագույնը 10 աշխատանքային օրով, կասեցնել սույն գլխում նշված պարտատոմսերի Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին թույլտվությունը, եթե Օպերատորը հրապարակային կամ որևէ պաշտոնական տեղեկատվության հիմքով համոզվում է, որ սույն կանոնների 135.-րդ կետի դրույթները պահպանված չեն և Իրավասու անձը՝ այդ մասին Օպերատորի կողմից տեղեկացումից հետո, ողջամիտ ժամկետներում համապատասխան միջոցներ չի ձեռնարկում: Անհրաժեշտ տեղեկատվությունը ստալու պահից կասեցման մասին որոշման գործողությունը համարվում է ինքնաբերաբար դադարած և Օպերատորը հնարավորինս սեղմ ժամկետում վերականգնում է տվյալ դասի պարտատոմսերով Պետական պարտատոմսերի շուկայում գործարքներ կատարելու հնարավորությունը:
138. Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին թույլտվության համար, Օպերատորի և թողարկողի կամ Իրավասու անձի փոխադարձ համաձայնությամբ կարող է նախատեսվել սույն կանոնների 130.-րդ և 135.-րդ կետերում նշված տեղեկացումների կամ տեղեկությունների տրամադրման այլ տարբերակներ:
139. Սույն գլխում նշված պարտատոմսերի Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին թույլտվությունը դարեցվում է՝
  - 1) եթե այդ պարտատոմսերն ամբողջությամբ մարվել են.
  - 2) եթե փոխվել են պարտատոմսերի շրջանառության պայմանները և այդ պարտատոմսերը չեն համապատասխանում սույն կանոնների 3-րդ գլխով նախատեսված պահանջներին.
  - 3) եթե սույն կանոնների 137.-րդ կետում նշված ժամկետում չեն վերացվել այդ պարտատոմսերի առևտրին թույլտվության կասեցման հիմքերը.
  - 4) թողարկողի կամ Իրավասու անձի դիմումի հիմքով:



140. Սույն կանոնների 139.-րդ կետի 2), 3) և 4) ենթակետերում նշված դեպքերում դադարեցումը կատարվում է Արժեթղթերն առևտրին թույլատրող մարմնի որոշմամբ, իսկ 1) ենթակետում նշված դեպքում որոշում չի կայացվում:
141. Պարտատոմսերի Պետական պարտատոմսերի շուկայում առևտրին թույլտվության կասեցման, կասեցման վերացման կամ դադարեցման մասին Օպերատորը անմիջապես հրապարակում է տեղեկատվական համակարգով և՛ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային համակարգով կամ առձեռն տեղեկացնում թողարկողին կամ Իրավասու անձին և Կենտրոնական բանկին:

## **ԲԱԺԻՆ Վ. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **ԳԼՈՒԽ 25. Սույն կանոնների ուժի մեջ մտնելը և կիրառությունը**

142. Սույն կանոններն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:
143. Սույն կանոններն ուժի մեջ մտնելու պահից արդեն ցուցակված կամ առևտրին թույլտվություն ստացած արժեթղթերը համարվում են ցուցակված կամ առևտրին թույլտվություն ստացած համապատասխան շուկաներում:

**Ձև ԱՑ-1.1**

(արժեթղթի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության հայտ)

**ՀԱՅՏ**

(թողարկողի անվանումը, կազմակերպական - իրավական ձևը)

(թողարկողի պետական գրանցման համարը և ամսաթիվը)

առաջարկում է «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության կանոններին համապատասխան \_\_\_\_\_ ցուցակել (թույլատրել առևտրին)

(նշվում է կարգավորվող շուկայի անվանումը)

**Ընկերության հետևյալ արժեթղթերը՝**

արժեթղթերի դասը (տեսակը)	
արժեթղթերի քանակը	
արժեթղթերի ձևը	
անվանական արժեքը	
տեղաբաշխման գինը	
արժեթղթերի տեղաբաշխման ձևը	(հրապարակային կամ փակ տեղաբաշխում )
արժեթղթերը թողարկված (տեղաբաշխված) են համաձայն	(նշվում է արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունող իրավասու մարմնի (անձի) անվանումը (անուն, ազգանունը), որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը)
թողարկողի գործունեության հիմնական տեսակը	
թողարկողի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները	

Նաև առաջարկվում է նշված արժեթղթերով հայտերի (առաջարկների) ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարել \_\_\_\_\_ :

(նշվում է ՀՀ դրամ կամ արտարժույթի անվանումը)

Միաժամանակ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին վերապահում ենք իրավունք՝ մեր կողմից ներկայացված արժեթղթերն թույլատրել առևտրին իր կանոններով սահմանված այլ շուկայում, եթե ներկայացրած արժեթղթերը չեն բավարարում մեր կողմից նշված շուկայում ընդգրկվելու համար սահմանված պահանջներին:

**«Մենք հավաստիացնում ենք, որ սույն Հայտում և դրան կից ներկայացվող տեղեկությունները ստույգ են և լիակատար գիտակցում ենք, որ դրանցում որևէ էական փաստի սխալ ներկայացում, խեղաթյուրում կամ բացթողում կարող է հանգեցնել ցուցակման (առևտրին թույլտվության) մերժմանը և(կամ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը:**

Միաժամանակ, սույնով թողարկողը պարտավորվում է արժեթղթի առևտրին թույլտվության պահից մինչև դրա առևտրին թույլտվության դադարեցումը պահպանել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից հաստատված և ՀՀ կենտրոնական բանկում գրանցված կանոններով սահմանված պահանջները»:

Ստորագրող անձինք՝

_____ (անուն, ազգանուն)	_____ (պաշտոն)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)
_____ (անուն, ազգանուն)	_____ (պաշտոն)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)
_____ (անուն, ազգանուն)	_____ (պաշտոն)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)

Հավաստիացնում եմ, որ Հայտը ստորագված է վերոհիշյալ անձանց կողմից.

_____ (անուն, ազգանուն)	_____ (Գործադիր տնօրեն, գործադիր մարմնի ղեկավար)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)
-------------------------	--	------------------------	-----------------

**Ձև ԱՑ-1.2**

(արժեթղթի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պայմանագիր)

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No\_\_\_**  
**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿՄԱՆ (ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ)**

**ք. Երևան**

\_\_\_\_\_ (օր, ամիս, տարեթիվ)

\_\_\_\_\_ (այսուհետև՝ Թողարկող), ի դեմս \_\_\_\_\_, (թողարկողի անվանումը, կազմակերպական - իրավական ձևը) \_\_\_\_\_ (պաշտոն և անուն, ազգանուն)

որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությունը, (այսուհետև՝ Ընկերություն), ի դեմս \_\_\_\_\_, (պաշտոն և անուն, ազգանուն)

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Սույն պայմանագրով Ընկերություն թույլատրում է Թողարկողի հետևյալ արժեթղթերի

արժեթղթերի դասը (տեսակը)	
արժեթղթերի քանակը	
արժեթղթերի ձևը	
անվանական արժեքը և արժույթը	

առևտուրը \_\_\_\_\_ (այսուհետև՝ Ծառայություններ), (նշել շուկայի անվանումը)

իսկ Թողարկողը պարտավորվում է վճարել Ծառայությունների համար:

1.2. Սույն պայմանագիրը կնքված է Ընկերության «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ի հիման վրա և սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Ընկերությունը պարտավոր է.

2.1.1. Ծառայությունների մատուցումը իրականացնել, ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Ընկերության կանոններով սահմանված ժամկետում և պայմաններով.

2.1.2. Թողարկողին տեղեկացնել Ընկերության այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների և լրացումների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում զետեղելը:

2.2. Թողարկողը պարտավոր է.

- 2.2.1. Մատուցվող Ծառայությունների համար Ընկերությանը վճարել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գինը:
- 2.2.2. Ժամանակին Ընկերությանը տեղյակ պահել սույն պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում փոփոխությունների մասին՝ ներկայացնելով նաև այդ փոփոխությունները և փոփոխված տեղեկությունները.
- 2.3. Ընկերությունն իրավունք ունի.
  - 2.3.1. հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումից, եթե Թողարկողի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:
- 2.4. Թողարկողն իրավունք ունի.
  - 2.4.1. Ընկերությունից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին և լրիվ ծավալով մատուցում:

**3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1. Թողարկողը Ընկերության կողմից մատուցվող Ծառայությունների համար վճարումները կատարում է ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Ընկերության «Սակագների մասին» կանոններով և «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ով սահմանված սակագներին, ժամկետներին ու կարգին համապատասխան: Ընկերության «Սակագների մասին» կանոնները և «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոնները» զետեղված են Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

**4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

- 4.1. Թողարկողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Ընկերությանը տրամադրված տվյալների հավաստիության և սույն պայմանագրով, ինչպես նաև Ընկերության կանոններով ստանձնած իր պարտականությունների կատարման համար:
- 4.2. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի կնքման համար Թողարկողի կողմից իրեն ներկայացված փաստաթղթերի հավաստիության համար:
- 4.3. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

**5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

5.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 1.1. կետում նշված Թողարկողի արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցումը:

**6. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ**

6.1. Սույն պայմանագրի կողմերի միջև ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված սույն պայմանագրի կողմերի լիազորված անձանց կողմից և վավերացված կնիքով, հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան,

բացառության այն դեպքերի, որոնք սահմանված են «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ով:

## 7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 7.1. Սույն պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:
- 7.2. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը, ինչպես նաև կողմերի միջև ստանձնած պարտավորությունների վերաբերյալ վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
- 7.3. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար մեկ օրինակ:
- 7.4. Թողարկողը սույն պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Ընկերության կանոններին և անհրաժեշտ այլ նորմատիվ իրավական ակտերին:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

<p><b>Թողարկող</b> (նշվում է հասցեն, կապի միջոցները, ՀՎՀՀ, բանկային վավերապայմանները, պայմանագիր ստորագրողի անուն ազգանունը և պաշտոնը)</p> <p>_____ /ստորագրություն/ Կ.Տ.</p>	<p><b>«Հայաստանի ֆոնդային բորսա»</b> <b>ԲԲԸ</b> (նշվում է հասցեն, կապի միջոցները, ՀՎՀՀ, բանկային վավերապայմանները, պայմանագիր ստորագրողի անուն ազգանունը և պաշտոնը)</p> <p>_____ /ստորագրություն/ Կ.Տ.</p>
---	--